

# ՇՆՈՐՀՔԻ
## ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՓՈԼ ՎՈՇԵՐ

# ՇՆՈՐՀՔԻ

## ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

# ՇՆՈՐՀՔԻ
## ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Փոլ Վոշեր

**The Essential Means of Grace, Paul Washer, Armenian**
© 2022 by Paul Washer

**Շնորհքի հիմական միջոցները, Փոլ Վոշեր, հայերենով**
Թարգմանված է անգլերենից, 2022թ.
Հեղինակային իրավունքները պատկանում են
«2022 Paul Washer»-ին

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող օգտագործվել կամ կրկնօրինակվել որևէ կերպ՝ առանց գրավոր թույլտվության:
Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, եթե չկան այլ նշումներ:

# Բովանդակություն

1. Շնորհքի միջոցները....................................... 1
2. Սուրբ Գիրքը..................................................7
3. Աղոթք......................................................23
4. Ապաշխարություն և խոստովանություն ....... 37
5. Եկեղեցին ..................................................57
6. Ի պաշտպանություն պարզունակության.......71

1

# Շնորհքի միջոցները

Արդյոք սգո՞ւմ եք ձեր հոգևոր աճի պակասի համար: Արդյոք ձգտո՞ւմ եք ավելի նմանվել Քրիստոսին: Եթե ձեր պատասխանը դրական է, ապա այս համառոտ աշխատությունը ձեզ համար է: Այդուհանդերձ, կանխավ զգուշացնում ենք, որ այս գրքի էջերում չեք գտնի ձեր հոգևոր կյանքի արագ շտկման գաղտնիքը կամ պատասխանը, նույնպես և չեք հայտնաբերի որևէ նոր բան: Այստեղ կգտնեք միայն հնուց եկած խնդրի հնուց եկած լուծումը: Ձեզ առաջարկվելու է ծանր դեղամիջոց, որը շատերը նախընտրում են շրջանցել և առավել հաճելի էլիքսիր (բուսական թանձր թուրմ) ընտրել: Այնուամենայնիվ, եթե դուք հոգնել եք տկար լինելուց, բավականաչափ թափառել եք հովիտներում և պատրաստակամ եք գնալ լեռն ի վեր դժվար ճանապարհով, ապա այս փոքրիկ աշխատությունը օգտակար կլինի ձեզ՝ որպես աճի միջոց՝ այն կետից, որտեղ հիմա կաք:

Լատիներենում շատ կարևոր աստվածաբանական արտահայտություն կա, որը պետք է իմանա և կիրառի ցան-

կացած լեզվով խոսող յուրաքանչյուր քրիստոնյա: Այդ արտահայտությունը հետևյալն է՝ *«media gratiae»*. հայերեն թարգմանությամբ՝ «շնորհքի միջոցներ»: Դարեր շարունակ եկեղեցին օգտագործել է այս փոքրիկ արտահայտությունը՝ նկարագրելու այն միջոցները կամ նվերները, որոնք Տեր Հիսուս Քրիստոսը տվել է եկեղեցուն՝ վերջինիս շարունակական սրբագործման կամ սրբության մեջ աճելու համար:

Ամենահայտնի և կարևոր միջոցներից են Սուրբ Գրքի ուսումնասիրությունը, նվիրումն աղոթքին և մասնակցությունը տեղի եկեղեցու կյանքին ու ծառայությանը: Այս միջոցները գործեր չեն, որոնք պետք է կատարենք՝ փրկությունը վաստակելու կամ դրան արժանանալու համար. դրանք նվերներ են Աստծուց, որոնց միջոցով հավատացյալը կարող է աճել այն փրկության մեջ, որը ստացել է միմիայն շնորհքով՝ Հիսուս Քրիստոսին հավատալու միջոցով: Ինչպես Պողոս առաքյալն է գրում. «Որովհետև շնորհքով եք փրկված հավատքի ձեռքով: Եվ սա ոչ թե ձեզնից է, այլ՝ Աստծո պարգևն է. ոչ թե գործերից, որ մեկը չպարծենա» (Եփես. 2.8,9):

Սուրբ Գիրքը բազմիցս հաստատում է, որ փրկությունը մոներգետիկ է՝ մեկ հոգու գործ: Աստված է մեր փրկության Հեղինակն ու Կատարողը, իսկ մենք Նրա փրկության գործի առարկան ենք: Այդուհանդերձ, Սուրբ Գիրքը նույն ջանասիրությամբ սովորեցնում է նաև, որ սրբության մեջ մեր աճը սիներգետիկ է՝ երկու կամ ավելի անձանց հավաքական աշխատանք*: Սա հրաշալի կերպով ներկայացված է Փիլիպիայի եկեղեցուն ուղղված Պողոսի հորդորի մեջ. «Ուրեմն, իմ սիրելիներ, ինչպես ամեն ժամանակ հնազանդվեցիք՝ ոչ միայն իմ ներկայությունում, այլև հիմա ավելի իմ բացակայությունում, ահով և դողալով գործեք ձեր անձերի փրկությունը: Որովհետև Աստված է, որ ներգործում է ձեզանում՝ կամենալն էլ,

անելն էլ՝ Իր հաճության պես»:

Ուշադրություն դարձրեք կատարյալ հավասարակշռությանը: Քանի որ Աստված է մեզանում ներգործում՝ թե՛ կամենալը, թե՛ անելը՝ Իր հաճության պես, մենք պետք է ահով և դողալով, այսինքն՝ Աստծո հանդեպ մեծագույն ակնածանքով և այս հանձնարարությանն ուղղված խորը լրջությամբ գործենք մեր փրկությունը: Աստվածաշնչյան քրիստոնեության մեջ անտարբերության, կարգուկանոնի պակասի կամ «ամեն բան Աստծո վրա թողնելու» համար տեղ չկա:

*«Media gratiae»* արտահայտության իմաստն ավելի լավ հասկանալու համար օգնության կգա լատիներեն *ordinarius* ածականը, որը նշանակում է «սովորական»: *«Media gratiae»*-ն վերաբերում է շնորհքի սովորական միջոցներին կամ այն սովորական ձևին, որով Աստված կարգադրել է, որ քրիստոնյաները աճեն Քրիստոսանմանության մեջ: Մենք այնպիսի օրերում ենք ապրում, երբ թվում է, թե եկեղեցում բոլորն ինչ-որ գերբնական բանի են սպասում՝ Հոգու շարժի, որն ակնթարթորեն կբուժի մեր բոլոր հոգևոր ախտերը, ինչի համար մեր կողմից քիչ ջանք կամ գին կպահանջվի: Գերբնականի հանդեպ ցանկությունը չպետք է տանի մեզ նրան, որ անարգենք այն սովորական միջոցները, որոնք Աստված տվել է մեզ՝ աճելու համար: Իրականում, Աստծո տնտեսվարության մեջ Նա չի իրագործում գերբնականը, քանի դեռ Իր ժողովուրդը չի սպառել այն սովորական միջոցները, որոնք Ինքը տվել է:

Վերոնշյալը փաստելուց հետո ասենք, որ խիստ անհավանական է, որ ժամանակակից եկեղեցին կամ անհատ քրիստոնյան սպառած լինի շնորհքի սովորական միջոցները. սովորած լինենք այն ամենը, ինչ Սուրբ Գիրքն է ասում, աղոթքով սպառած լինենք Աստծո բոլոր խոստումները, այնքան մտերմացած լինենք Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ, որ այլևս աճե-

լու տեղ չլինի, և քաղած լինենք բոլոր այն օգուտները, որոնք կարող ենք քաղել տեղի եկեղեցուն անդամակցելու արդյունքում: Առավել հավանական չէ՞, որ շնորհքի այս սովորական, սակայն հիմնական միջոցների հանդեպ անուշադրություն, անհոգություն կամ ծուլություն ցուցաբերած լինենք: Հարկավոր է ուշադիր լինել, որ չանարգենք փոքր բաների օրը (տե՛ս Զաքարիա 4.10): Իրականում, Հիսուսը սովորեցնում է. «Տեսեք՝ ինչ եք լսում, ինչ չափով, որ չափեք, նրանով էլ ձեզ կչափվի, և կավելանա ձեզ՝ լսողներիդ» (Մարկոս 4.24): Եվ կրկին. «Քիչ բանի մեջ հավատարիմը, շատ բանի մեջ էլ հավատարիմ է» (Ղուկաս 16.10): Այն հավատացյալը, որն անարգում է սովորականը, հազվադեպ ականատես կլինի գերբնականին:

Պատճառը, թե ինչու *«media gratiae»* արտահայտությունը մեծ մասամբ ծանոթ չէ ժամանակակից ավետարանականներին, միայն այն է, որ մենք անտեղյակ ենք աստվածաշնչյան քրիստոնեության պատմական շատ ճշմարտություններին, որոնք նախկինում ծառայել են Քրիստոսի եկեղեցու զորացմանը և մաքրմանը: Կար ժամանակ, երբ *«media gratiae»* կամ «շնորհքի միջոցները» արտահայտությունն ամեն քրիստոնյայի բառապաշարի մասն էր կազմում: Սրա ապացույցն է Վեստմինստերի համառոտ կատեխիզիսի 88-րդ հարցը, որն օգտագործվել է երեխաներին և նորադարձներին քրիստոնեության հիմունքները սովորեցնելու համար:

*Հարց.* Որո՞նք են այն արտաքին միջոցները, որոնցով Քրիստոսը հաղորդում է մեզ փրկագնման օգուտները:

*Պատասխան.* Արտաքին և սովորական միջոցները, որոնցով Քրիստոսը մեզ է հաղորդում փրկագնման օգուտները, հետևյալն են՝ Նրա կարգադրություննե-

րը, հատկապես՝ խոսքը, խորհուրդները և աղոթքը[1], որոնք ներգործում են ընտրվածների մեջ փրկության համար[2]:

Կարևոր է նկատի առնել, որ «շնորհքի միջոցները» շեշտադրելը կամ դրանց առաջնահերթություն տալը ընդունված չէր Երիցական կամ խիստ Բարեկարգված եկեղեցիներում, սակայն լայն կիրառություն ուներ և ուսուցանվում էր վաղ մկրտականների և այլ ավետարանականների կողմից: Մկրտական կատեխիզիսի 95-րդ հարցը, որի հեղինակն է հայտնի կալվինիստական մկրտական Բենջամին Կիչը (1640-1704թթ.), բառ առ բառ կրկնօրինակում է Վեստմինստերի համառոտ կատեխիզիսում շնորհքի միջոցներին տրված սահմանումը:

Մենք այնպիսի դարաշրջանում ենք ապրում, երբ մեծ թվով անկեղծ հավատացյալներ հենվում են համացանցի քարոզիչների, բլոգների, թվիթերի և ձայնային բիթերի վրա: Չնայած այն բանին, որ որոշները կարող են օգտավետ լինել՝ ոչինչ չի կարող փոխարինել այն արդյունավետ միջոցներին, որոնք Տերն է տվել Իր ժողովրդին, որպեսզի վերջիններս աճեն: Մենք մեր ոտքերը պետք է ուղղենք թե՛ դեպի Սուրբ Գրքի վաղեմի ճանապարհները[3], թե՛ մեզնից առաջ գնացած

---

1 «Ուրեմն, գնացե՛ք բոլոր ազգերը, աշակերտե՛ք՝ նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով. նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ, որ ձեզ պատվիրեցի, պահեն: Եվ ահա Ես ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչև աշխարհի վերջը: Ամե՛ն» (Մատթ. 28.19,20):

2 «Եվ նրանք, որ Նրա Խոսքը հոժարությամբ ընդունեցին, մկրտվեցին: Եվ այն օրը երեք հազարի չափ հոգի ավելացավ: Եվ միշտ հետևում էին առաքյալների վարդապետությանը և հաղորդությանը և հացի կտրելուն և աղոթքներին... Ամեն օր միաբանությամբ տաճարում էին լինում և հաց էին կտրում տներում և ուրախությունով և սրտի միամտությունով կերակուր էին ուտում. Աստծուն օրհնում էին և ամբողջ ժողովրդի առջև շնորհք ունեին: Եվ Տերն ամեն օր փրկվածների թիվն ավելացնում էր եկեղեցու հետ» (Գործք 2.41,42,46,47):

3 «Այսպես է ասում Տերը. «Կանգնե՛ք ճանապարհներին և տեսե՛ք և հարցրե՛ք վաղեմի ճանապարհներից՝ արդյոք ո՞րն է լավ ուղին, այն ժամանակ գնացե՛ք նրանով: Եվ դուք հանգստություն կգտնեք ձեր հոգիների համար: Բայց նրանք ասում են՝ չենք գնում»» (Երեմիա 6.16):

հավատարիմ տղամարդկանց և կանանց ճանապարհները: Հաջորդ էջերում համառոտ կքննարկենք շնորհքի երեք սովորական միջոցները, որոնցով Աստված, շնորհաշատ լինելով, օժտել է ամեն անհատ քրիստոնյայի նաև եկեղեցուն՝ ընդհանուր առմամբ, խթանելու աստվածապաշտությունը, որից բխում է Քրիստոսին կերպարանակից լինելու ցանկությունը. դրանք են Սուրբ Գիրքը, աղոթքը և տեղի եկեղեցու ծառայությունն ու արարողությունները:

## Հարցեր և խորհրդածություններ գլխի վերաբերյալ

1. Ի՞նչ իմաստ է կրում լատիներեն *«media gratiae»* արտահայտությունը:
2. Նշե՛ք այս գլխում թվարկված շնորհքի միջոցները:
3. Ինչո՞ւ են շնորհքի միջոցները հաճախ անվանվում շնորհքի *սովորական* միջոցներ:
4. Որո՞նք են սովորականն անարգելու վտանգները, մինչ սպասում ենք գերբնականին:
5. Բացատրե՛ք Վեստմինստերի համառոտ կատեխիզիսի 88-րդ հարցի իմաստն ու նշանակությունը:

2

# Սուրբ Գիրքը

Շնորհքի միջոցների մասին համառոտ ներածությունից հետո այժմ քննարկենք առաջինը՝ Սուրբ Գրքի ուսումնասիրությունը և մեկնաբանումը: Բացի Ինքն Իրեն մարդկությանը նվիրելուց՝ եռամիասնական Աստված ևս մեկ անփոխարինելի նվեր է շնորհել եկեղեցուն՝ Սուրբ Գիրքը: Գոյություն չունի Աստծո Անձի, հրամանների, գործերի, կամքի և խոստումների մասին անսխալական ճշմարտության մեկ այլ աղբյուր: Պողոս առաքյալն իր երիտասարդ ծառայակից Տիմոթեոսին ուղղված նամակում զորավոր կերպով հաստատում է այս ճշմարտությունը. «Ամեն Գիրք աստվածաշունչ է և օգտակար՝ վարդապետության և հանդիմանության և ուղղելու և արդարությամբ խրատելու համար. որ Աստծո մարդը կատարյալ լինի բոլոր բարի գործերի համար պատրաստված» (Բ Տիմոթ. 3.16,17):

Չնայած այն բանին, որ Սուրբ Գիրքը մարդու կողմից վավերացվելու կարիք չունի՝ մեր իսկ օգտի համար կարևոր է հաստատել այն, որ Սուրբ Գրքի՝ Աստծո կողմից ներշնչված, անսխալական և բացարձակ անհրաժեշտություն լինելը դարեր շարունակ եղել է և կա ճշմարիտ եկեղեցու մնայուն հա-

մոզմունքը: Վեստմինստերյան դավանանքը և 1689թ.-ի Լոնդոնի մկրտական դավանանքը հռչակում են հետևյալը.

Սուրբ Գիրքը փրկության առաջնորդող ամբողջ գիտելիքի, հավատքի և հնազանդության միակ բավարար, հաստատուն ու անսխալական չափորոշիչն է... Տերն այս հայտնությունն ամբողջությամբ գրավոր ձևով է տվել, որպեսզի ճշմարտությունն ավելի լավ պահպանվի և տարածվի, որպեսզի եկեղեցին ավելի մեծ որոշակիությամբ հաստատվի և մխիթարվի՝ մարմնի ապականության և սատանայի ու աշխարհի չարության դեմ: Ուստի, Սուրբ Գիրքը բացարձակ անհրաժեշտություն է, քանի որ Աստված դադարել է նախկին ձևերով Իր կամքը հայտնել Իր ժողովրդին[1]:

Եթե մենք որևէ կերպ հապաղում ենք համաձայնելու այն բանին, որ Սուրբ Գիրքը ներշնչված է Աստծո կողմից, անսխալական է և բավարար, ապա երբևէ չենք ունենա քրիստոնեական կյանքի ամուր հիմք. կլինենք «երերված ու տատանված վարդապետության ամեն քամուց» (Եփես. 4.14), կլինենք մեր հաճախադեպ և սխալական մտքերի, հույզերի և ազդակների գերին՝ պատուհասված անընդմեջ տատանվող հույսի, անկանխատեսելի խառնվածքի և սխալական վարքի պատճառով:

## Սուրբ Գրքի ուսումնասիրություն

Անապատում փորձվելու ժամանակ Հիսուսը պնդեց, որ Սուրբ Գիրքը հավատացյալի կյանքում բացարձակ անհրաժեշտություն է. «Գրված է՝ ոչ միայն հացով կապրի մարդը, այլև ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից» (Մատթեոս 4.4): Այստեղ տեսնում ենք, որ հոգևոր սնունդ ստանա-

1 *1689թ.-ի Մկրտական դավանանքի ժամանակակից անգլերեն թարգմանություն* (Cape Coral, Fla.: Founders Press, 2017), 1.1. Cf. Westminster Confession of Faith 1.1.

լու համար մենք պետք է մեծագույն ջանասիրությամբ սնվենք Խոսքով, ինչպես սնվում ենք ֆիզիկական կերակուրով՝ որպես ամենօրյա սնուցման միջոց: Աստվածաշունչը ներշնչված է Աստծուց, սակայն այն կախարդական գիրք չէ: Դրանում գրված խոսքերն ու ճշմարտությունները էջերից պարզապես չեն թռչում ընթերցողի սրտի և մտքի մեջ:

Սուրբ Գրքից օգուտ քաղելու համար պետք է ջանասիրությամբ ուսումնասիրենք այն: Պողոս առաքյալը Տիմոթեոսին գրել է. «Ջա՛նք արա, որ քո անձն ընտիր կանգնեցնես Աստծո առջև իբրև մի մշակ՝ առանց ամոթի, որ ճշմարտության խոսքն ուղիղ մատակարարես» (Բ Տիմոթ. 2.15): Եվ կրկին. «Մինչև որ գամ՝ միտք դի՛ր կարդալուն, հորդորմունքին և վարդապետությանը... Սրանք մտածի՛ր, սրանցում մնա՛, որ քո առաջադիմությունը ամենին հայտնի լինի» (Ա Տիմոթ. 4.13-15):

Չնայած այն բանին, որ Պողոսը հորդորում էր մեկին, ով նշանակվել էր ծառայության, նրա հորդորը ավելի լայն ու ընդհանուր կիրառություն ունի ամեն հավատացյալի համար: Աստվածաշնչյան, բարեկարգված և ավետարանական հավատքը կոչ է անում ամեն հավատացյալի՝ ամենահասուն սուրբից մինչև նորադարձը, ուսումնասիրել, հասկանալ և կիրառել Աստծո Խոսքը: Երբ Հիսուսը հռչակեց, որ «ոչ միայն հացով կապրի մարդը, այլև ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից», Նա վստահաբար նկատի ուներ ամեն մարդու (տե՛ս Մատթ. 4.4), և որքան ավելի հավատքի ընտանիներին:

Եթե դուք համոզված և նվիրված չեք Սուրբ Գրքի անձնական, ջանասեր և հետևողական ուսումնասիրությանը, ապա շատ քիչ օգուտ կքաղեք այն ամենից, ինչը գրված է այս գրքի շարունակության մեջ: Մեր ճանապարհը դեպի քրիստոնեական հասունություն՝ հիմնված է Աստծո Անձի, հրամաննե-

րի, գործերի, կամքի և խոստումների ճանաչողության վրա: Հնարավոր չէ ունենալ նման գիտելիք՝ առանց Սուրբ Գրքի անձնական, ջանասեր ուսումնասիրության, առանց աստվածաշնչյան հայտնությունների հետևողական մեկնության և առանց ճշմարիտ աստվածաշնչյան եկեղեցուն անդամակցելու: Եթե այս հիմքն անարգենք, ապա քիչ հավանական է, որ Աստծո ճանաչողության մեջ առաջընթաց ապրենք և աճենք համապատասխան Նրա կամքի:

Անկախ այն բանից՝ նոր եք դարձել քրիստոնեական հավատքին, թե շատ տարիների սուրբ եք, Աստծո ճանաչողության մեջ աճելու գլխավոր միջոցը՝ Սուրբ Գիրքը՝ Ծննդոցից Հայտնություն, կրկին ու կրկին ընթերցելն է՝ որպես *կյանքի* ամենօրյա *կարգ:* Որպես նշանակված ծառայող՝ ես օրվա ընթացքում ժամեր եմ տրամադրում Աստվածաշնչի ուսումնասիրությանը և հայտնաբերել եմ, որ ոչինչ չի կարող փոխարինել Սուրբ Գրքի պարզ ամենօրյա ընթերցմանը: Ուստի, խորհուրդ եմ տալիս այն, ինչը մեծապես օգտակար է եղել ինձ համար. ամեն օր ժամանա՛կ հատկացրեք պարզապես Սուրբ Գիրքն ընթերցելուն: Մի՛ շտապեք և մի՛ բարկացեք, երբ ընթերցանությունը դանդաղ է ընթանում: Հեշտ է ընթերցել Սուրբ Գրքի որոշ հատվածներ: Կլինեն օրեր, երբ երեքից հինգ գլուխ կընթերցեք, սակայն կլինեն նաև օրեր, երբ միայն մեկը կընթերցեք: Նպատակը՝ Աստծո Խոսքը վայելելն է, Աստծո ճանաչողության մեջ աճելը և այդ ճանաչողությամբ վերափոխվելը: Ամենօրյա ընթերցանության համար սրտանց խորհուրդ եմ տալիս օգտվել Աստվածաշնչի ուսումնական ձեռնարկից՝ որպես արագ վկայակոչումների աղբյուր: Այն կօգնի հասկանալ բարդ եզրույթներն ու արտահայտությունները, ինչպես նաև կպահի ձեր պատմական, ավետարանական քրիստոնեության համատեքստում: Ահա՛ աստվածաշնչյան այն չորս ուսումնական ձեռնարկները, որոնք, ըստ իս, ամենաօգտա-

վետն են. Բարեկարգման ժառանգության ուսումնական Աստվածաշունչ *(Reformation Heritage Study Bible),* Բարեկարգման ուսումնական Աստվածաշունչ *(Reformation Study Bible),* Աստվածաշնչի՝ *ESV* թարգմանության ուսումնական ձեռնարկ *(ESV Study Bible)* և Աստվածաշնչի՝ ՄակԱրթուրի ուսումնական ձեռնարկ *(MacArthur Study Bible)*[2]:

Ընթերցելով Սուրբ Գիրքը՝ անկասկած կհայտնաբերեք շատ առանցքային և հիմքային խոսքեր, որոնք վերաբերում են աստվածաբանական ճշմարտությունների, և այլ խոսքեր, որոնք հատուկ նշանակություն կունենան տվյալ պահին ձեր անձնական իրավիճակի և կարիքի համար:

Դրանք պետք է անգիր անել: Չնայած այն բանին, որ կան Աստծո Խոսքն անգիր անելու շատ ձևեր, բոլորի հիմքում մեկ բան է՝ աշխատասիրություն և հաստատակամություն: Մենք հաճախ կարծում ենք, թե այլ քրիստոնյաներ որոշակի ուղղություններում բարձրանում, աճում են պարզապես իրենց պարգևների, տաղանդների և անհատականության շնորհիվ: Աճում են, որովհետև դա իրենց ավելի հեշտ է տրվում, քան մեզ: Այդուհանդերձ, ես պարզել եմ, որ մեծ մասամբ դա այդպես չէ: Այո՛, ոմանք կարող են ունենալ ավելի սուր միտք՝ Աստծո Խոսքն անգիր անելու համար, սակայն նրանք բարձրանում են, քանի որ գիտակցել են Աստծո Խոսքը ներքինացնելու մեծ օգուտը և պատրաստակամ են անել այդ աշխատանքը: Սաղմոսերգուն գրել է. «Իմ սրտում թաքցրի Քո խոսքերը, որ չմեղանչեմ Քո դեմ» (Սաղմ. 119.11): Հակառակը կստացվի. «Իմ սրտում *չթաքցրի* Քո խոսքերը, որ *մեղանչեմ* Քո դեմ»:

Ես հասկանում եմ, որ իմ խորհուրդը շատերին կարող է չա-

---

2 *The Reformation Heritage KJV Study Bible*, ed. Joel R. Beeke, Michael Barrett, Gerald Bilkes, and Paul Smalley (Grand Rapids: Reformation Heritage Books, 2014); *The Reformation Study Bible*, ed. R. C. Sproul (Orlando, Fla.: Reformation Trust, 2015); *ESV Study Bible* (Wheaton, Ill.: Crossway, 2011); *MacArthur Study Bible*, ed. John MacArthur (Nashville, Tenn.: Thomas Nelson, 2013).

փից պարզունակ թվալ: Այդուհանդերձ, Սուրբ Գիրքը կրկին կազմից կազմ ընթերցելը եկեղեցու պատմության մեջ ականավոր սուրբերի փափագն էր, և մինչև այսօր էլ շարունակում է այդպիսին լինել: Եթե չգիտեք որտեղից սկսել, ձեզ հավանաբար կօգնի Ռոբերտ Մյուրի ՄակՉեյնի Աստվածաշնչի ընթերցանության օրացույցը[3]: Մի քանի տասնամյակ շարունակ այն մեծապես օգնել է շատ սուրբերի, ովքեր իրենց նվիրել են Սուրբ Գրքի ընթերցանությանը:

## Սուրբ Գրքի մեկնաբանումը

Բացի մեր անձնական ընթերցանությունից և Սուրբ Գրքի ուսումնասիրությունից՝ Սուրբ Գիրքը սովորեցնում և քարոզում են նաև տեղի եկեղեցու հավատարիմ առաջնորդները, ովքեր հովվում են մեզ: Աստծո ժողովրդի համար շնորհքի ամենամեծ միջոցը՝ աստվածապաշտ հովիվների հոգածության ներքո գտնվելն է. հովիվներ, ովքեր նվիրված են Խոսքի ուսումնասիրությանը, ապրում են Խոսքով և հռչակում են Խոսքը: Նման ծառայողի հրաշալի օրինակ է Եզրասը (թե՛ կյանքում, թե՛ ծառայության մեջ), ում մասին Սուրբ Գիրքը վկայություն է տալիս. «Նրա համար, որ Եզրասը պատրաստել էր իր սիրտը, որ ՏԻՐՈՋ օրենքը խնդրի և կատարի, և Իսրայելի մեջ սովորեցնի օրենք և դատաստան» (Եզրաս 7.10): Օրինակն ավելի ցայտուն ներկայացված է Մաղաքիայի գրքում, որտեղ նկարագրված է կատարյալ ղևտացի քահանան. «Ճշմարտության օրենք կար նրա բերանում, և անիրավություն չէր գտնվում նրա շրթունքներում. խաղաղությամբ և

---

3 Ռ. Բ. ՄակՉեյնը (1813-1843թթ.) ծառայում էր Շոտլանդիայում՝ Դանդի քաղաքի Սբ. Պետրոսի եկեղեցում: Նա մշակել է Աստվածաշնչի ընթերցանության օրացույց, որն ընդգրկում է հետևյալը. մեկ տարում Հին կտակարանի ընթերցանությունը՝ մեկ անգամ, իսկ Նոր կտակարանինը և Սաղմոսներինը՝ երկու անգամ: Այն կարելի է տպագրել կամ օգտվել առցանց:

ուղղությամբ էր վարվում ինձ հետ և շատերին դարձնում էր անօրինությունից: Որովհետև քահանայի շրթունքները պետք է գիտություն պահեն և օրենք կփնտրեն նրա բերանից, որովհետև նա Զորքերի Տիրոջ դեսպանն է» (Մաղաքիա 2.6,7):

Ինչպես ոչինչ չի կարող փոխարինել Սուրբ Գրքի մեր անձնական ուսումնասիրությանը, այնպես էլ ոչինչ չի կարող փոխարինել աստվածապաշտ հովվի ծառայությանը, ով մեկնում է Աստծո Խոսքը այն հոտի համար, որին անձամբ ճանաչում է, սիրում և անձնազոհությամբ ծառայում է: Վերջին տարիներին, համացանցի տարածման շնորհիվ, հավատացյալները կարող են լսել աշխարհի ամենաշնորհալի քարոզիչներին, սակայն այս օրհնության մեջ նաև այլ բան է խառնված: Համացանցային ծառայության հասանելիությունը չի փոխարինում տեղի հարանվանությանն անդամակցելու կենսական անհրաժեշտությանը, իսկ ամենաականավոր համացանցային քարոզիչները, թեև օգուտ են տալիս, սակայն չեն կարող փոխարինել աստվածապաշտ հովվին, ով հավատարիմ է Աստծո Խոսքին: Վերջինս գուցե ակադեմիական հավատարմագրեր կամ արտասովոր պարգևներ չունենա, սակայն հավատարիմ հովիվ է, և նրա կարևորությունը ձեր սրբագործման մեջ ավելին է, քան բոլոր համացանցային քարոզիչներինը միասին: Շնորհքի այս հրաշալի միջոցն անարգելը հոգևոր անհասության և սրտի թմրության նշան է:

Կարևոր է նաև հիշել, որ նույնիսկ ամենաականավոր քարոզիչները պարզապես մարդիկ են, ովքեր ընդունակ են սխալվելու և պետք է դատվեն՝ ըստ Աստծո Խոսքի: Ինչպես Պողոսի օրերում բերիացիները, այդպես էլ մենք պետք է ընդունենք «Խոսքը ամբողջ հոժարությամբ», և «...ամեն օր Գրքերը քննենք, թե այս այսպե՞ս է» (Գործք 17.11): Մենք չպետք է «անարգենք մարգարեությունները» (այն է՝ աստվածաշնչյան ուսմունքը), սակայն

պետք է «ամեն բան փորձենք»[4]: Այս հորդորներին հնազանդվելու համար պետք է անձնապես, ջանասիրաբար և հետևողականորեն ուսումնասիրենք Աստծո Խոսքը:

Մինչ առաջ անցնելը ցանկանում եմ հովիվներին կարճ հորդոր տալ. դուք Երկիր մոլորակի վրա ամենաարտոնված մարդիկ եք, և ձեզ մեծ տնտեսվարություն է տրվել: Եթե հավատացյալին կոչ է արվում ահով և դողալով գործել իր փրկությունը, ապա որքան ավելի դուք պետք է իրականացնեք ձեր ծառայությունը մեծագույն ակնածանքով (տե՛ս Փիլիպ. 2.12): Չե՞ք գիտակցում արդյոք, որ դաhլիճում նստած հավատացյալի հաճախ հնչող դժգոհությունն այն է, որ իրենց հովիվները կարծես ավելի շատ զբաղված լինեն ծրագրերով, ռազմավարություններով և իրենց հոտի անդամների քանակով, քան Աստծո Խոսքը ուսումնասիրելով, ծածուկ աղոթքներով, աստվածապաշտ կյանքի օրինակ ստեղծելով և Սուրբ Գիրքը մեկնելով: Թանկագի՛ն եղբայրներ, թո՛ղ մեր մասին նման բան չասվի: Թո՛ղ մենք լինենք Եզրասի նման, ով «պատրաստել էր իր սիրտը, որ ՏԻՐՈՋ օրենքը խնդրի և կատարի, և Իսրայելի մեջ սովորեցնի օրենք և դատաստան» (Եզրաս 7.10): Թո՛ղ առաքյալի նման ամեն շեղող հանգամանքի ասենք. «Իսկ մենք աղոթքին և պաշտամունքին հետևենք» (Գործք 6.4):

## Աստծո Խոսքի կիրառությունը երկրպագության մեջ

Սուրբ Գիրքը ոչ միայն պետք է անձնապես ուսումնասիրել և քարոզի միջոցով բացատրել, այլև արտահայտել մեր հան-

4 Մարգարեության պարգևը դադարել է: Այդուհանդերձ, հորդորները շարունակում են արդիական մնալ եկեղեցում: Մարգարեների խոսքերը հավիտենապես գրված են Սուրբ Գրքի անսխալական խոսքերում: Մենք չպետք է անարգենք այդ մարգարեական խոսքերի ճշգրիտ մեկնությունը և կիրառությունը, նույնիսկ երբ դրանք մերկացնում, հանդիմանում, շտկում և խրատում են մեզ: Այդուհանդերձ, պետք է բոլոր հռչակումները քննենք Սուրբ Գրքի լույսի ներքո՝ հավաստիանալու, որ դրանք ճիշտ են և շինություն են բերում (տե՛ս Ա Թեսաղ. 5.20,21, NASB):

րային երկրպագության մեջ և դրա միջոցով: Սա կատարվում է երեք հիմնական ձևերով՝ Աստծո Խոսքի հանրային ընթերցանություն, Աստծո Խոսքի հանրային մեկնաբանում և Աստծո Խոսքի երգեցողություն:

Այսօր Խոսքի երկար հատվածների հանրային ընթերցանությունը հազվադեպ է: Շատերը կզարմանան, սակայն վաղ Բարեկարգված և Ավետարանական եկեղեցիներում այն հարանվանական երկրպագության կենտրոնական մաս էր: Եվ այդ մոտեցումը հիմնված չէր մեր հոգևոր հայրերի անձնական նախընտրության վրա, այլ կարգադրված է հենց Սուրբ Գրքում: Տիմոթեոսի Առաջին թղթի 3.15-ում Պողոս առաքյալը երկար հրահանգներ է տալիս այն մասին, թե «ինչպես պետք է Աստծո տան մեջ վարվել», և կարգադրում է Խոսքի ընթերցանությունը դարձնել հարանվանական երկրպագության կենտրոնական մաս. «Մինչև որ գամ՝ միտք դի՛ր կարդալուն, հորդորմունքին և վարդապետությանը» (Ա Տիմոթ. 4.13):

Մենք մեր տունն ավազի վրա ենք կառուցում, երբ անտեսում ենք այս կարգադրությունը՝ պատճառաբանելով, թե այն «դանդաղեցնում» է ծառայության ընթացքը, կամ ժամանակակից մարդը կորցրել է ուշադրությամբ լսելու կարողությունը: Մենք չպետք է համաձայնենք կամ հարմարվենք մեր մշակույթի ցածր չափորոշիչներին: Հռոմեական կաթոլիկ եկեղեցու անհամար սխալներից և հերձվածություններից մեկն այն է, որ այն քրիստոնեությունը հարմարեցնում է մշակույթին, որպեսզի հաճելի և ընդունելի լինի: Ի հակադրություն՝ բարեկարգողները հավատարիմ էին մնում Սուրբ Գրքին և կոչ անում իրենց շրջապատող մշակույթներին համապատասխանել դրա բարձր չափորոշիչներին: Հռոմեական կաթոլիկ եկեղեցին միայն ցածրացրել և աղտոտել է քրիստոնեությունը, մինչդեռ բարեկարգված հավատքը մշակույթները բարձրացրել է նոր հոգևոր, ակադեմիական, տնտեսական և

հասարակական բարձունքների: Մենք չպետք է հանդուրժենք այն միտքը, որ համացանցի ձայնային բիթերի այս դարաշրջանի մարդիկ այլևս չեն կարող Աստծո Խոսքի ընթերցանության երկար հատվածներ կամ քսան րոպեից ավելի տևողությամբ քարոզներ լսել: Փոխարենը՝ պետք է սիրով և համբերությամբ ընթերցենք Խոսքն այնքան, մինչև մարդիկ դրանով վերափոխվեն:

Խոսքն ընթերցելուն զուգահեռ անհրաժեշտ է նաև Խոսքի հավատարիմ մեկնությունը աստվածապաշտ առաջնորդների, ուսուցիչների և ավետարանիչների կողմից, ովքեր նվիրված են դրա ուսումնասիրությանը: Սա ևս երկրպագության մի ձև է, որում խոսնակը հռչակում, բացատրում և գովաբանում է Աստծո գործերն ու հատկանիշները: Իր հերթին սա հարանվանության հավատացյալների սրտերի մեջ ավելի մեծ ակնածանք, գնահատանք և սեր է առաջացնում Աստծո հանդեպ: Ժնևի մեծ բարեկարգող Ջոն Կելվինը մեկ անգամ գրել է. «Լավ ուսուցչի նպատակը պետք է լինի մարդկանց աչքերը աշխարհից շրջելը և դեպի Երկինք ուղղելը»[5]: Ճշմարիտ աստվածաշնչյան քարոզչությունը, նախ և առաջ, վերաբերում է կյանքի սկզբունքների փոխանցմանը, որպեսզի հարանվանությունը կարողանա հասնել «լավագույն կյանքին հիմա»: Այն Աստծո մասին գիտելիքի փոխանցումն է, ինչը ծնում է հավատք, երկրպագություն և սրտանց հնազանդություն: Ինչպես Սուրբ Գրքի հանրային ընթերցանությունը, այնպես էլ նման պատմական մոտեցումը քարոզչությանը այսօր հազվագյուտ երևույթ է, և այն շարունակում է մնալ շնորհքի հիմնական միջոցներից մեկը: Որպես քրիստոնյա՝ սա ձեզ համար պետք է առաջնահերթություն լինի: Ինչ գին էլ պահանջվի և ինչ դժվարությամբ էլ հարկավոր լինի անցնել, ձգտե՛ք

---

5 *Կելվինի մեկնությունները* Տիտոս 1.2-ի վերաբերյալ, 21:283.

անդամակցել այնպիսի եկեղեցու, որտեղ առաջնորդներն ու ուսուցիչները նվիրված են Սուրբ Գրքի ուսումնասիրությանը, ովքեր քարոզչությունը և ուսուցչությունը համարում են իրենց կյանքի ծառայությունը, և ում քարոզները գիտելիք են տալիս և շարժառիթ ծառայում՝ հոգով և ճշմարտությամբ երկրպագելու Աստծուն, «որովհետև Հայրն էլ այսպես է ուզում Իր երկրպագողներից» (Հովհ. 4.23):

Ի վերջո, Աստծո Խոսքի ընթերցանության և մեկնության հետ զուգակցվում է Խոսքի երգեցողությունը: Հարանվանական երգեցողությունը երկրպագության քայլ է, որը պետք է ուղղված լինի բացառապես Աստծուն, ինչի արդյունքում շինվում է հարանվանությունը: Աստծուն հաճեցնելու և սուրբերին շինություն տալու համար նման երգեցողությունը պետք է լինի թե՛ աստվածաշնչյան, թե՛ խրատական[6]: Որոշ Բարեկարգված եկեղեցիներ սովորեցնում են, որ ամենաապահով և լավագույն տարբերակը հետևյալն է՝ եկեղեցում երգել միայն այն, ինչ գրված է երգեցողության Աստծո կանոնական ձեռնարկի շրջանակներում, այն է՝ սահմանափակվել սաղմոսներով, մինչդեռ այլ Բարեկարգված եկեղեցիների համար ընդունելի է երգել օրհներգեր, որոնք փոխանցում են Աստծո Խոսքից վերցված վարդապետական ճշմարտություններ, խրատներ, հորդորներ և զգուշացումներ:

Չնայած որ երկու կողմի տեսանկյուններն էլ ամուր են տվյալ հարցի վերաբերյալ՝ երկու կողմերն էլ համաձայն են, որ երգեցողությունը՝ որպես միասնական երկրպագություն,

6 «Խրատական» բառը վերցված է հունարեն *«didaskein»* բառից, որը նշանակում է սովորեցնել: Երկրպագության երգերը, որոնք խրատական բնույթ են կրում, ուսուցողական են, տեղեկատվական և կրթական: Դրանք աստվածաշնչյան ճշմարտություն են հաղորդում: Այն, որ երգեցողությունը պետք է խրատական լինի, ապացուցված է Կողոսացիներին ուղղված Պողոսի խոսքերով. «Քրիստոսի Խոսքը բնակվի ձեր մեջ առատապես ամեն իմաստությունով. իրար սովորեցրե՛ք և խրատե՛ք, սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով և շնորհքով օրհներգե՛ք Տիրոջը ձեր սրտերում» (3.16):

Աստծո ժողովրդի համար շնորհքի ճշմարիտ և կարևոր միջոց է:

Շատ գիտնականներ և եկեղեցական պատմաբաններ վիճում են, որ բարեկարգման (ռեֆորմացիայի) կարևոր ճշմարտությունները հասարակ մարդկանց փոխանցվել են ոչ միայն բարեկարգողների քարոզչության շնորհիվ, այլ նաև աստվածաշնչյան օրհներգերի միջոցով, որոնք գրվել և երգվել են եկեղեցում: Պատահական չէ, որ Սուրբ Գրքի օրհներգերը կամ երգարանը՝ Սաղմոսների գիրքը, քրիստոնեության ամենակարևոր վարդապետություններից շատերի ուսումնասիրության առաջնային աղբյուրն է՝ հատկապես, երբ խոսքը Աստծո մասին վարդապետության մասին է: Պողոս առաքյալը Կողոսացիներին ուղղված իր նամակում հաստատում է երկրպագության և Խոսքի միջև գոյություն ունեցող այս կապը. «Քրիստոսի Խոսքը բնակվի ձեր մեջ առատապես ամեն իմաստությունով. իրար սովորեցրե՛ք և խրատե՛ք, սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով և շնորհքով օրհներգե՛ք Տիրոջը ձեր սրտերում» (Կողոս. 3.16):

Աստվածաշնչի վրա հիմնված հույզերը հաճելի նվեր են Աստծուց, իսկ աստվածաշնչյան երկրպագությունը վստահաբար մեր հույզերն Աստծո կամքի համեմատ շարժելու զորություն ունի: Այդուհանդերձ, մեր հուզական արձագանքը երաժշտությանը, ռիթմին կամ օրհներգի բառերին՝ չի խոսում երգի պատշաճ լինելու մասին: Այն պետք է փորձվի Աստծո Խոսքով և հաղորդի Աստծո Խոսքի ճշմարտությունները: Բավարար չէ միայն այն, որ օրհներգը զերծ լինի հերձվածությունից, այն պետք է լցված լինի նաև ճշմարտությամբ: Երբ երաժշտությունը լռում է, իսկ ռիթմը՝ դադարում, մնում է Աստծո այն ճշմարտությունը, որը հաղորդվել է օրհներգի միջոցով:

## Սուրբ Գրքի կարևորագույն թեման

Հասկացանք, որ Սուրբ Գիրքը հզոր միջոցն է, որի օգնությամբ մենք ոչ միայն փրկվում ենք[7], այլև՝ սրբագործվում: Այդուհանդերձ, կթերանայինք, եթե չառաջադրեինք ամենակարևոր ճշմարտությունը՝ այն, որ Սուրբ Գրքի կենտրոնական թեման Տեր Հիսուս Քրիստոսի Անձն ու Նրա կատարած փրկագնման աշխատանքն է: Նա է Սուրբ Գրքի ձգողական ուժը և պետք է լինի մեր ընթերցանության, ուսումնասիրության, քարոզչության և երգեցողության սկզբում, կենտրոնում և վերջում:

Չնայած այն բանին, որ Ավետարանի ուղերձը Սուրբ Գրքի մաս է, այն այնքան կարևոր և գերազանց թեմա է, որ պետք է առանձին քննարկել: Շատ քարոզիչներ դարեր շարունակ հաստատել են, որ նույնիսկ Աստվածաշնչի փոշին ոսկու արժեք ունի, և նույնիսկ Աստծո Խոսքի փոքրիկ նշագիրն ու վերնագիրն ավելի մեծ արժեք ունեն, քան այն գրքերը, որոնք գրվել են և դեռ պետք է գրվեն: Այդուհանդերձ, նույնիսկ Սուրբ Գրքում կա մեկ ուղերձ, մեկ ճշմարտություն, որն ավելի բարձր է դասվում, քան մյուսները. «Որովհետև Ես առաջուց այն տվի ձեզ, որ Ես էլ ընդունեցի, թե Քրիստոսը մեր մեղքերի համար մահացավ՝ գրքերի համեմատ: Եվ թե՛ թաղվեց, թե՛ երրորդ օրը հարություն առավ՝ գրքերի համեմատ» (Ա Կորնթ. 15.3,4): Այս հաստատումներում ամփոփված է Աստծո և փրկության ամբողջ ծրագրի ամենամեծ հայտնությունը:

Ավետարանը ոչ միայն «Աստծո զորությունն է՝ փրկելու ամեն հավատացողի», այլև՝ հավատքի մեջ մեր առաջխաղացման և հաստատակամության ամենամեծ խթանը (տե՛ս Հռոմ. 1.16): Պողոս առաքյալը գրում է. «Որովհետև Քրիստո-

---

7 «Եվ որ մանկությունիցդ Սուրբ գրքերը գիտես, որ կարող են քեզ իմաստուն անել փրկության համար՝ այն հավատքի ձեռքով, որ Քրիստոս Հիսուսում է» (Բ Տիմոթ. 3.15):

սի սերը ստիպում է մեզ, որ սա ենք միտք անում՝ եթե մեկն ամենի տեղ մեռավ, ուրեմն ամենը մեռած են: Եվ ամենի համար մեռավ, որ կենդանի լինողները այլևս ոչ թե իրենց անձերի համար կենդանի լինեն, այլ նրա համար, որ իրենց համար մեռավ և հարություն առավ» (Բ Կորնթ. 5.14,15):

Հիսուս Քրիստոսի Ավետարանում նշված են հավատքի բոլոր պատճառները և աճի, տոկունության, ծառայության ու զոհաբերության բոլոր խթանները: Քրիստոսի մեկ առկայծումը բավական է, որ հավատացյալի վերածնված սիրտն անցնի տասը հազար կյանքերի հոգևոր պատերազմների, մարմնի հետ ճակատամարտերի, ներքին փորձությունների, հալածանքների և ֆիզիկական տկարությունների միջով: Ավետարանում պատմվող Քրիստոսի պատկերի հեռավոր առկայծումն էր, որ Մովսեսին ստիպեց թողնել Եգիպտոսը և մեղքի անցողիկ հաճույքները ու տառապել Աստծո ժողովրդի հետ՝ դեմ դուրս գալով աշխարհի ամենահզոր կառավարչին[8]:

Քրիստոսի պատկերի առկայծումն էր, որ դրդեց Պողոսին նվիրվել անխոնջ ծառայությանն ու նահատակվել: Քրիստոսի պատկերի առկայծումն էր, որ զորացրեց Հովհաննես Բունյանին՝ տարիներ անցկացնել ճաղերի ետևում և չհրաժարվել Ավետարանի քարոզչությունից: Քրիստոսի պատկերի առկայծումն էր, որ Վիլյամ Քերիին տարավ Հնդկաստան, Հադսոն Թեյլորին՝ Չինաստան, Ջորջ Մյուլերին՝ Բրիսթոլի որբերի մոտ: Մեջբերենք Եբրայեցիների հեղինակի խոսքերը. «Էլ ի՞նչ ասեմ, որ ժամանակս բավական չէ, որ պատմեմ» այն անհամար սուրբերի մասին, ովքեր դարերի ընթացքում արե-

8 «Հավատքով՝ Մովսեսը երբ որ մեծացավ, չկամեցավ Փարավոնի աղջկա որդի կոչվել: Ավելի լավ համարեց Աստծո ժողովրդի հետ չարչարվել, քան թե միաժամանակ մեղքի զվարճությունն ունենալ. ավելի մեծ հարստություն համարելով Քրիստոսի նախատինքը Եգիպտացիների հարուստ գանձերից. որովհետև աչք դրած մտիկ էր տալիս վարձքի հատուցմանը: Հավատքով թողեց նա Եգիպտոսը՝ չվախենալով թագավորի բարկությունից, որովհետև համբերեց՝ անտեսանելին տեսնողի պես» (Եբր. 11.24-27):

ցին և դիմակայեցին արտասովոր բաների՝ ունենալով մեկ դրդապատճառ՝ այն, որ Քրիստոսը մահացել է մեղավորների համար: Եթե ցանկանում եք միանալ այդ պատվելի խմբին նմանատիպ սխրագործություններով և տոկունությամբ, ապա ամեն բանից ավելի փնտրե՛ք Քրիստոսին Սուրբ Գրքի և աղոթքի մեջ: Ինչպես իմաստունն է ասել՝ իմաստությունը կատարելության է հասնում Քրիստոսում. նա ավելի պատվական է, քան գոհարները, և քո բոլոր ցանկալի բաները նրան չարժեն[9]:

## Հարցեր և խորհրդածություններ գլխի վերաբերյալ

1. Ո՞րն է շնորհքի «առաջնային» միջոցը, որն Աստված տվել է հավատացյալին: Ինչո՞ւ այն պետք է համարվի առաջնային կամ հիմքային:

2. Ո՞րն է սուրբգրային այն խոսքը, որը փաստում է Աստծո Խոսքի բացարձակ անհրաժեշտություն լինելը: Ի՞նչ ճշմարտություն է այն հաղորդում:

3. Արդյոք համաձա՞յն եք հետևյալ պնդմանը: Ինչո՞ւ: «Եթե մենք որևէ կերպ հապաղում ենք համաձայնել այն պնդմանը, որ Սուրբ Գիրքը ներշնչված է Աստծո կողմից, անսխալական է և բավարար, ապա երբեք չենք ունենա քրիստոնեական կյանքի ամուր հիմք»:

4. Ի՞նչ է նշանակում հետևյալ պնդումը, և արդյո՞ք համաձայն եք դրան. «Աստվածաշունչը ներշնչված է Աստծո կողմից, սակայն կախարդական գիրք չէ: Դրա խոսքերը և ճշմարտությունները պարզապես դուրս չեն թռչի

9 «Նա պատվական է գոհարներից, և քո բոլոր ցանկալի բաները նրան չարժեն» (Առակ. 3.15):

գրքի էջերից՝ ընթերցողի սրտի և մտքի մեջ: Աստծո Խոսքից օգուտ ստանալու համար մենք պետք է ուսումնասիրենք այն և անենք դա ջանասիրաբար»:

5. Ինչպե՞ս պետք է ուսումնասիրենք Սուրբ Գիրքը: Ուսումնասիրության ի՞նչ գործիք է ներկայացված այս գլխում: Ինչո՞ւ:

6. Համաձայն այս գլխի՝ որքա՞ն կարևոր է այն, որ մենք միանանք տեղի եկեղեցուն և գտնվենք որակավորված առաջնորդների բացատրական քարոզչության ներքո:

7. Որո՞նք են այն երեք առաջնային միջոցները, որոնցով Աստծո Խոսքը հաղորդվում է հանրային երկրպագության մեջ և միջոցով: Ո՞րն է յուրաքանչյուրի նշանակությունը:

8. Ինչո՞ւ պետք է Հիսուս Քրիստոսի Ավետարանը լինի մեր ուսումնասիրության, քարոզչության և երկրպագության կենտրոնում: Բացատրե՛ք, թե ինչու են Քրիստոսը և Նրա Ավետարանը քրիստոնեական կյանքի մեծագույն խթանը:

3

# Աղոթք

Դեռ պարզ չէ, թե որն է քրիստոնեական կյանքի ամենաանտեսված կարգը՝ Աստվածաշնչի ամենօրյա ընթերցանությո՞ւնը, թե՞ աղոթքը: Որքան էլ պարզունակ հնչի, այդ բաղադրիչի անտեսումը անհատ հավատացյալի և հավաքական եկեղեցու՝ գրեթե բոլոր հոգևոր ախտերի աղբյուրն է: Թվում է, թե բոլորը միաձայն ընդունում են Խոսքի ու աղոթքի անհրաժեշտությունը, սակայն, նույնկերպ միաձայն ընդունում են նաև, որ անձնապես անտեսում են երկուսն էլ: Թե՛ ծառայողները, և թե՛ աշխարհականները հաճախ են ասում. «Երբևէ չեմ լսել, որ մահվան շեմին եղող հավատացյալը զղջա, որ չափից շատ ժամանակ է հատկացրել Աստծո Խոսքին և աղոթքին»:

Այս ամենը պետք է հանգեցնի կարևոր և ցավոտ հարցին. «Ինչո՞ւ ենք աղոթքն այդքան դժվար բան համարում»: Ակնհայտ պատճառը մեր մարմինն է և մեր համառ ինքնաբավ լինելը: Մեր մարմինն ատում է ծածուկ սենյակի աղոթքը, քանի որ վերջինս մերժում է ինքնաբավությունը, արգելում է փառքը վերցնել սեփական անձի վրա և հիացմունքն ու գովասանքն ուղղում է Աստծուն: Ինչ-որ առումով մեր մարմինը կարող է

ուղղորդել մեզ այն հարցում, թե ինչն է իսկապես կարևոր քրիստոնյայի կյանքում. այն, ինչին մարմինն ամենից շատն է հակառակվում, ամենակարևորն է: Իսկ ինչի՞ն է հակառակվում մեր մարմինը ավելի, քան Սուրբ Գրքի ընթերցանությանը կամ անձնական աղոթքին:

Աղոթքի դեմ մեր պայքարների մեկ այլ պատճառ է մեր պարզ հավատքի բացակայությունը: Աղոթքը հնարավորություն է՝ հրաշագործության մեջ մասնակցություն ունենալու և դրան ականատես լինելու՝ թե ինչպես է Աստված «առատությամբ անում բոլոր բաներից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում» (Եփես. 3.20): Ղուկաս 18.1-8-ում Հիսուսը տալիս է հաստատակամ աղոթքին պատասխանելու Աստծո պատրաստակամության Իր մեկնությունը: Նա Իր Խոսքն ավարտում է ամենատխուր լուսաբանումներից մեկով այն մասին, որ մարդիկ հավատքի և աղոթքի հանդեպ նվիրման պակաս ունեն. «Սակայն մարդու Որդին գալիս՝ արդյոք հավատք կգտնի՞ երկրի վրա» (Ղուկաս 18.8):

Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր Քրիստոսում, թո՛ղ սա չլինի մեր սերնդի նկարագիրը: Թո՛ղ մենք չլինենք այն մարդիկ, ովքեր չունեն, որովհետև չեն խնդրում (տե՛ս Հակոբ. 4.2): Մի կողմ թողնենք մարմնի կարողությունն ու դրա թերի հնարավորությունները և մեզ ամբողջությամբ ու հաստատակամորեն աղոթքով նվիրենք Աստծուն: Մի՞թե Նա չի խոստացել. «Որովհետև Տիրոջ աչքերը դիտում են ամբողջ երկիրը, որ զորացնի նրանց, որոնց սիրտը ուղիղ է Նրա հետ» (Բ Մնաց. 16.9): Եվ կրկին. «Քո պարիսպների վրա, ո՛վ Երուսաղեմ, պահապաններ եմ դրել. դրանք ամբողջ օրը և ամբողջ գիշերը բնավ չպիտի լռեն. դուք, ո՛վ Տիրոջը հիշողներ, մի՛ լռեք, և Նրան դադար մի՛ տվեք, մինչև որ Նա հաստատի, և մինչև որ Նա Երուսաղեմը օրհնություն շինի երկրում» (Եսայի 62.6,7): Որքան ավելի քիչ վստահենք մեր մարմնին, և որքան ավելի

շատ մեզ աղոթքով գցենք Աստծո վրա, այնքան ավելի կտեսնենք Նրա հրաշագործ զորությունը մեր մեջ և մեր միջոցով: Նման խոստումների առկայության պարագայում ինչպե՞ս կարող ենք հուսալքվել: Ինչպե՞ս կարող ենք վեր չկենալ և առաջ չշարժվել:

## Հետևելով Քրիստոսի օրինակին

Մեր ինքնաբավության անմտությունը բացահայտելու համար բավական է միայն, որ ինքներս մեզ համեմատենք կատարյալ մարդու՝ Աստված-Մարդու՝ Հիսուս Քրիստոսի հետ: Չենք չափազանցնի, եթե ասենք, որ Նա աղոթքի Մարդ էր: Նրա ծառայության երեք տարիները վիճելիորեն ամենազբաղվածը, ամենահոգնեցուցիչը և ամենախստապահանջն էին երբևէ գրի առնվածներից, և Նա գերազանց էր՝ որպես աղոթքի Մարդ:

Շատերն են ասում, որ եթե Մարկոսի Ավետարանը ճիշտ ընթերցենք, ապա ընդամենը մի քանի էջ կարդալուց հետո կհոգնենք: Այն նման է ակնթարթային նկարների շարքի, որոնցում պատկերված է, թե ինչպես է Քրիստոսը ջանում կատարել Իր Հոր կամքը: Առաջին գլխում մի քանի անգամ հանդիպում ենք «շուտով» բառին՝ Քրիստոսի գործողությունների վերաբերյալ: Շուտով Նա դուրս եկավ մկրտության ջրից (խոսք 10), շուտով Հոգին Նրան անապատ տարավ (խոսք 12), շուտով Նա կանչեց Հովհաննեսին և Հակոբոսին (խոսք 20), շուտով Շաբաթ օրը Նա ժողովարան մտավ և սովորեցրեց (խոսք 21), շուտով ժողովարանից դուրս գալով՝ եկավ Սիմոնի և Անդրեասի տուն (խոսք 29), շուտով Նրան ասացին, որ Սիմոնի զոքանչը հիվանդ է, և Նա բժշկեց նրան (խոսք 30,31): Այնուհետև նույն օրվա մասին Մարկոսը գրում է. «Եվ երբ որ իրիկուն եղավ, արեգակը մայր մտնելիս, բոլոր հի-

վանդներին և դիվահարներին Նրա մոտ բերին: Եվ ամբողջ քաղաքը ժողովված էր դռան առջև: Եվ շատ կերպ-կերպ ցավերով հիվանդների բժշկեց և շատ դևեր հանեց: Եվ թույլ չէր տալիս դևերին, որ խոսեն, որովհետև գիտեին Նրան» (խոսքեր 32-34):

Քրիստոսի ամբողջ օրն ու երեկոն նվիրված էր Իր Հոր կամքը կատարելուն և Իր ժողովրդի կարիքները հոգալուն: Մենք նույնիսկ չգիտենք՝ արդյո՞ք այդ գիշեր Նա քնեց, սակայն գիտենք, որ «Լուսաճագին՝ առավոտ կանուխ, վեր կացավ, դուրս եկավ, գնաց մի անապատ տեղ և այնտեղ աղոթք էր անում» (խոսք 35): Կարևոր է նշել, որ այս *խոսքը չպետք է* օգտագործվի, որպես ապացույց այն բանի, թե քունը կարելի է անտեսել կամ հանգստից հրաժարվել. դրանով պետք է միայն մատնանշվի, որ Հիսուսը գիտակցում էր աղոթքի բացարձակ անհրաժեշտությունը:

Քրիստոսի նվիրումն աղոթքին՝ առավել հաստատվում է Ղուկասի Ավետարանում և Քրիստոսի աղոթքի կյանքի մասին բազում վկայակոչումներում: Նա աղոթեց իր մկրտության ժամանակ (տե՛ս Ղուկ. 3.21): Նա «դուրս եկավ և գնաց անապատ տեղ»՝ աղոթելու, երբ մարդկանց ամբոխը Նրան էր որոնում (4.43): Իր հագեցած ծառայության մեջ Նա «քաշվում էր անապատ տեղեր և աղոթք էր անում» (5.15,16): Մինչ կընտրեր Իր աշակերտներին՝ «ելավ սարը աղոթք անելու և ամբողջ գիշերն անցկացրեց՝ աղոթք անելով Աստծուն» (6.12): Նա «առանձին աղոթք արեց»՝ մինչև Իր աշակերտներին կասեր գալիք մահվան մասին (9.18-22):

Քրիստոսի աղոթքի կյանքի մասին այս վկայակոչումները գագաթնակետին են հասնում, երբ Ղուկասի Ավետարանում ասվում է, որ «Նա մի տեղ աղոթք էր անում, և երբ որ դադարեց, Իր աշակերտներից մեկն ասաց Նրան. «Տե՛ր, սովո-

րեցրո՛ւ մեզ  աղոթք անել…»» (Ղուկաս 11.1): Պատկերացնո՞ւմ եք: Որևէ տեղ գրված չէ, որ աշակերտները խնդրեցին Հիսուսին սովորեցնել իրենց ջրերի վրայով քայլել, հիվանդներին բժշկել, մահացածներին հարություն տալ կամ քարոզել, սակայն այդ մի բանը խնդրեցին. «Սովորեցրո՛ւ մեզ աղոթել»: Կարո՞ղ է պատահել, որ Քրիստոսի մեջ ամենատպավորիչ կամ ապշեցնող բանը Նրա աղոթքի կյանքն էր: Նրա հաղորդությունն Աստծո հետ մի բան էր, որ աշակերտները նախկինում երբևէ չէին տեսել որևէ մարդու կյանքում և ցանկանում էին իմանալ՝ ինչպե՞ս աղոթեն Նրա նման:

Իհարկե, մենք պետք է ձգտենք ամեն առումով նմանվել Քրիստոսին մեր բնավորությամբ և ծառայությամբ: Սակայն բնավորության և ծառայության հարցերում ձգտումները թող պատճառ չդառնան, որ անտեսենք Քրիստոսի նվիրման կամ աղոթքի կյանքը նմանակելը. «Որովհետև նրանում է բնակված Աստվածության ամեն լիությունը մարմնապես» (Կողոս. 2.9): Նա իսկական Մարդ էր, և որպես Մարդ՝ Նա մեր օրինակն է[1]: Նա աղոթքով, Սուրբ Հոգու օգնությամբ, Հորից ստանում էր ուղղորդում և կարողություն: Որքա՜ն ավելի մենք պետք է գիտակցենք նույն կարիքը և նվիրենք մեզ աղոթքին:

## Սովորենք Քրիստոսից

Ինչ վերաբերում է աղոթել սովորելուն և աղոթքի բովանդակությանը, այս հարցում երկու ծայրահեղություն կա: Մի դեպքում կան մարդիկ, ովքեր արհամարհում կամ անտեսում են Սուրբ Գրքի ուսմունքները և աղոթում են՝ ըստ նրա, ինչն իրենց ճիշտ է թվում, կամ՝ ըստ իրենց հույզերով փոխանցված տարբեր ազդակների: Եվ չնայած այն բանին, որ պնդում

1 Ա Տիմոթ. 2.5-ում Պողոս առաքյալը Աստծո Որդուն կոչում է «Քրիստոս Հիսուս Մարդ»: Ա Կորնթ. 11.1-ում նա գրում է. «Ինձ նմանվող եղեք, ինչպես ես էլ՝ Քրիստոսին»:

են, թե առաջնորդվում են Սուրբ Հոգով, հաճախ մեղանչում են նրանով, որ աղոթում են Հոգու՝ Սուրբ Գրքով բացահայտված կամքին հակառակ: Մյուս ծայրահեղությունն այն է, որ կան մարդիկ, ովքեր պարծենում են բացարձակապես աստվածաշնչյան աղոթքներով, քանի որ իրենց աղոթքի կյանքը բաղկացած է պարզապես սուրբգրային աղոթքներն ու խոստումներն Աստծո համար ընթերցելուց: Չափի մեջ կիրառելու պարագայում սա կարող է շինություն բերել, սակայն Սուրբ Գրքի ուսմունքը չի արգելում կամ հետ չի պահում մեր առանձնահատուկ աղոթքներից, որոնք հիմնված են Աստծո Խոսքի վրա և առաջնորդված են դրանով: Եթե դուրս թողնեինք աղոթքի բոլոր տեսակները՝ բացի Սուրբ Գիրքը Աստծո համար ընթերցելու տարբերակից, ապա պետք է բացառեինք նաև Խոսքի մեկնությունը քարոզչության միջոցով և թողնեինք միայն Աստվածաշնչի հանրային ընթերցանությունը:

Ի հակադրություն վերոնշյալ ծայրահեղությունների՝ եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում աստվածաշնչյան բարեպաշտ սուրբերը ջանացել են նորոգել իրենց մտքերը՝ Քրիստոսի միտքը զարգացնել իրենցում՝ Սուրբ Գիրքը սերտելով: Հավատարիմ մնալով այս աստվածաշնչյան կարգին՝ մենք պետք է ուսումնասիրենք Աստծո բոլոր ցուցումները, որոնք գրված են Աստծո Խոսքում, աճենք Աստծո Անձի և գործերի ճանաչողության, Քրիստոսում՝ Աստծո առջև մեր ով լինելու հասկացողության մեջ, ինչպես նաև հասունանանք Սուրբ Գրքով բացահայտված Աստծո կամքի և խոստումների զանազանության հարցում: Ավելին՝ մենք պետք է նվիրենք մեզ աղոթքի մասին վարդապետության ուսումնասիրությանը և խորհենք Աստվածաշնչում գրված աղոթքների շուրջ՝ այնպես, որ «դրանք մտածենք, դրանցում կենանք», որպեսզի մեր «առաջադիմությունը [առաջադիմությունն աստվածաշնչյան աղոթքի մեջ] ամենին հայտնի լինի» (Ա Տիմոթ. 4.15):

Սուրբ Գիրքը լի է աղոթքների օրինակներով, որոնցից կարող ենք սովորել, սակայն դրանցից մեկը վեր է և առանձնանում է մյուսներից: Ղուկասի 11.1-ում աշակերտները խնդրում են Հիսուսին. «Սովորեցրո՛ւ մեզ աղոթել»: Ի պատասխան՝ Հիսուսը սովորեցնում է նրանց այն աղոթքը, որը հայտնի է որպես «Տերունական աղոթք»: Ինչպես Մովսեսն է ասել վառվող մորենու մասին, մենք պետք է «դառնանք և տեսնենք այդ մեծ տեսարանը» (Ելից 3.3):

Ավետարանականները հաճախ են խուսափում «Տերունական աղոթքը» որպես աղոթքի օրինակ գործածելուց, քանի որ այն սխալ կերպով գործածվել է հռոմեական կաթոլիկների կողմից: Այդուհանդերձ, մենք չենք կարող արդարացնել այդ աղոթքը չկիրառելը նրանով, որ ինչ-որ մեկը սխալ է գործածել այն: Սուրբ Գրքում նշվածը զարմանահրաշ փաստ է, որ մեկ անգամ, երբ Հիսուսին խնդրեցին աղոթել սովորեցնել, Նա ուղղորդեց դեպի «Տերունական աղոթքը».

> «Արդ, դուք այսպես աղոթք արե՛ք. «Մեր Հա՛յր, որ Երկնքում ես. Սուրբ լինի Քո անունը.
>
> Գա Քո Արքայությունը, լինի Քո կամքը՝ ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա:
>
> Մեր ամեն օրվա հացը տուր մեզ այսօր:
>
> Եվ թող մեզ մեր պարտքերը, ինչպես մենք էլ թողնում ենք մեր պարտականներին:
>
> Եվ մի՛ տար մեզ փորձության, այլ ազատի՛ր մեզ չարից. որովհետև Քոնն է թագավորությունը և զորությունը և փառքը հավիտյանս. ամե՛ն»»:
>
> – Մատթեոս 6.9-13

Առաջին թանկարժեք քարը, որը մեզ տրված է այս աղոթքում, պատշաճ վերաբերմունքն է աղոթքի նկատմամբ՝ հավասարակշռությունը մտերմության և ակնածանքի միջև: Աստված մեզ սիրող Հայրն է, Ում հետ կատարելապես հաշտվել ենք ու կարող ենք ազատ զրուցել՝ առանց դատապարտության վախի: Սակայն պետք է միշտ հիշենք, որ մեր Հայրը Երկնքի Թագավորն է, բոլորի Տերը և արժանի է մեր մեծագույն ակնածանքին: Աստվածաշնչի շատ ուսուցիչներ ճիշտ շեշտադրում են արել «Աբբա Հայր» արտահայտության վրա: Պողոսը Հռոմի հավատացյալներին խրախուսում է. «Որովհետև դուք ծառայության հոգին չառաք, որ դարձյալ վախենաք. այլ՝ որդեգրության հոգին առաք, որով աղաղակում ենք՝ Աբբա, Հա՛յր» (Հռոմ. 8.15): Եվ նույնը գրում է Գաղատիայի եկեղեցուն. «Եվ որովհետև դուք որդիներ եք, Աստված Իր Որդու Հոգին ուղարկեց ձեր սրտերի մեջ, որ աղաղակում է Աբբա, Հա՛յր» (Գաղատ. 4.6): Այս խոսքերը վստահաբար աղոթքի մեծ քաջալերանք են մեզ համար, քանի որ հաստատում են այն, որ մենք Աստծո հետ ունենք մտերիմ, հայրական-որդիական հարաբերություն:

Այդուհանդերձ, այն տարածված ուսմունքը, թե արամեերեն «Աբբա» արտահայտության հայերեն համարժեքը «հայրիկն» է, անհիմն է և վնասաբեր: Մենք պետք է հասկանանք, որ առաջին դարի մերձավորարևելյան համատեքստում «աբբա» բառը հստակ հաղորդում է քաղցրություն և մտերմություն՝ առանց նվազեցնելու հատուկ ակնածանքը հայր-որդի հարաբերություններին: Հայերեն «հայրիկ» բառի կիրառումը բոլորովին պատշաճ չէ այդ համատեքստում, քանի որ այն չի հաղորդում պատշաճ ակնածանք Իսրայելի Սուրբին մոտենալիս, Ով ասել է. «...Ինձ մոտեցողներով պիտի սրբվեմ, և ամբողջ ժողովրդի առջև պիտի փառավորվեմ...» (Ղևտ. 10.3):

Երկրորդ թանկարժեք քարը, որը կարելի է տեսնել այս

աղոթքի մեջ, նման է բազմակողմանի ադամանդի. դրանում երեք առանձին խնդրանքներ են արտահայտված, որոնք բարդ կերպով փոխկապակցված են: Այդ խնդրանքները պետք է լինեն մեզ կառավարող ձգտումները և կազմեն մեր աղոթքների մեծ մասը: Դրանք պետք է աղոթել թե՛ անհատ քրիստոնյայի անունից, թե՛ եկեղեցու անունից՝ ընդհանուր առմամբ, և թե՛ ամբողջ մարդկության անունից: Առաջին խնդրանքով՝ «Սուրբ լինի Քո անունը», մենք աղոթում ենք, որ Աստծո անունը ճանաչվի որպես առանձին և զատված անուն, որը վեր է մյուս անուններից, և համապատասխան պատիվ տրվի Նրան: Դրանով մեր և եկեղեցու համար Աստծուց խնդրում ենք, որ կարողանանք աճել Նրան ուղղված մեծարանքի և նվիրման մեջ, որպեսզի Նա մեր սրտերում լիովին առանձին տեղ զբաղեցնի, որը վեր կլինի մյուս բոլոր սերերից՝ մրցակցությունից դուրս: Անհավատ աշխարհի համար աղոթում ենք, որ Ավետարանը տարածվի, ազգերից հեռանա հոգևոր կուրությունը և նրանց նոր սիրտ տրվի, որպեսզի մեծարեն Աստծո Անձն ու կամքը՝ ամեն բանից ավելի:

Երկրորդ խնդրանքը՝ «Գա Քո Արքայությունը», այս արտահայտության միջոցով մենք խնդրում ենք Աստծուց, որ Նրա գերիշխան և օրինավոր կամքը դառնա մեր անհատականության և եկեղեցու միասնաբար աճող իրականությունը, որպեսզի մեզ լիովին հանձնենք Նրան՝ մեր սիրտը, շունչը, միտքը և կարողությունը, որ Նա թագավորների Թագավոր ճանաչվի մեր կյանքի ամեն ակնթարթի, բնագավառի և մանրուքի մեջ: Անհավատ աշխարհի համար աղոթում ենք, որ այն դադարի պատերազմել Աստծո դեմ և ընդունի ամեն անձ, հաստատություն և աշխատանք ղեկավարելու Նրա իրավունքը, որպեսզի հասարակության, կառավարության, մշակույթի և գիտության ամեն բնագավառ Տեր ընդունի Նրան և թույլ տա, որ Աստծո գերիշխան իրավունքը ղեկավարի:

Երրորդ խնդրանքով՝ «Լինի Քո կամքը՝ ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա», Աստծուց խնդրում ենք, որ մեր ներքին ենթակայությունը Նրա տիրակալությանը՝ արտահայտված լինի արտաքին, ակտիվ հնազանդությամբ և ծառայությամբ, որպեսզի կարողանանք երկրի վրա Նրա առջև ապրել այնպես, ինչպես մեկ օր կապրենք Երկնքում: Ինչ վերաբերում է անհավատ աշխարհին, ապա աղոթում ենք, որ Ավետարանն այնպես տարածվի, որ «բոլոր ազգերը, ցեղերը, ժողովուրդներն ու լեզուները» հաշտվեն Աստծո հետ և պատրաստակամորեն ու ուրախությամբ հնազանդվեն թագավորների Թագավորին և տերերի Տիրոջը (տե՛ս Հայտն. 7.9):

Այս երեք խնդրանքները Քրիստոսի սրտի կամ ձգտումների բացահայտումն են. հետևաբար, դրանք պետք է լինեն մեր կյանքերի կենտրոնական ձգտումը և մեր աղոթքների առանցքը: Որպես Աստծո ժողովուրդ՝ մենք ունենք մեծ խնդիր և ուզում ենք, որ այն լուծված լինի. որ սուրբ լինի Նրա անունը, գա Նրա Արքայությունը, և կատարված լինի Նրա կամքը մեզանում, եկեղեցում և ամբողջ երկրագնդի վրա: Այլ ցանկություն կամ կարիք՝ որքան էլ հիմնավոր լինի, մնում է երկրորդական: Նույնիսկ «Տերունական աղոթքի» մյուս խնդրանքները պետք է ընկալվեն այդ մեկ խնդրի համատեքստում:

Ամենօրյա հացի, փորձությանը դիմակայելու կարողության, եկեղեցու միաբանության մասին խնդրանքները նրա համար են, որ կարողանանք ավելի մեծ կենտրոնացմամբ և արդյունավետությամբ գործել՝ Տիրոջ անունը պատվելու, Նրա Արքայությունը տարածելու և Նրա կամքը կատարելու ուղղությամբ: Կարող ենք վստահ լինել, որ Աստված կպատվի այդպիսի աղոթքը:

«Տերունական աղոթքի» հետ մեկտեղ Սուրբ Գրքում կան անհամար աղոթքներ՝ ընդհանուր սրբագործման, Սուրբ Գիրքը հասկանալու համար լուսավորվելու և քրիստոնեական

կյանքում ուղղորդում ու զորություն ստանալու վերաբերյալ: Դրանց մեկ տասներորդին նույնիսկ համառոտ անդրադարձ կատարելու համար հարկավոր կլիներ մի քանի հատոր գրել: Այդուհանդերձ, դրանք ձեզ են սպասում Սուրբ Գրքում: Իսկ ինչ պահանջվում է ձեզնից, պատրաստակամությունն է, որն արտահայտվում է ջանասիրաբար սերտելով:

## Անձնական և միաբան աղոթքներ

Կա աղոթքի երկու կարևոր համատեքստ, որոնք հիմքային են քրիստոնյայի աճի և հասունության համար: Առաջինը՝ անձնական կամ ծածուկ աղոթքն է: Այն ներառում է անձնական երկրպագությունը, շնորհակալությունը, հաղորդությունը և Աստվածաշնչի վրա հիմնված բոլոր խնդրվածքների բարձրաձայնումը: Անձնական աղոթքը մեծ կարևորություն ունի Սուրբ Գրքի սերտողության մեջ, քանի որ մենք անընդմեջ ունենք Հոգու օգնության կարիքը: Աստծո Հոգին է, որ լուսավորում է մեզ՝ հասկանալու Աստծո Խոսքը[2], և զորացնում է՝ հնազանդվելու համար[3]: Բացի այդ՝ անձնական աղոթքն ու հաղորդությունը պաշտպանում են մեզ հավատքի այն տեսակից, որն ամբողջովին հիմնված է ուղեղի, բանականության կամ ակադեմիական կարողությունների վրա՝ մինչդեռ պետք է լինի վերափոխող, հարաբերությունների վրա հիմնված և գործնական:

Մշտապես պետք է հիշենք, որ ճշմարիտ քրիստոնեությունն ավելին է, քան հեղինակավոր ճշմարտությունը, որը հայտնի է դառնում Աստծո կողմից ներշնչված, անսխալական և անթերի Գրքի միջոցով: Այն նաև անձնական, վերափոխող և փոխադարձ հարաբերություն է Աստծո հետ, Ով բացահայտվում է այդ Գրքի մեջ:

---

2 Ա Կորնթ. 2.12, Ա Հովh. 2.20,27, Եփես. 1.15-19

3 Եփես. 3.14-16, Կողոս. 1.29

Մեր անձնական կամ ծածուկ աղոթքի կյանքին զուգահեռ պետք է մասնակցենք նաև եկեղեցական կամ միաբան աղոթքներին: Երուսաղեմի քարե տաճարի վերաբերյալ Հիսուսն ասաց. «Գրված է՝ Իմ տունն աղոթքի տուն պիտի լինի»[4]: Որքան ավելի պետք է կիրառվի Եսայու գրքի այս մեջբերումը Քրիստոսի հոգևոր տաճարում՝ եկեղեցում[5]: Գործք առաքելոց գրքում տեսնում ենք, որ վաղ եկեղեցին նվիրված էր միաբան աղոթքներին: Ղուկասը գրում է. «Եվ միշտ հետևում էին առաքյալների վարդապետությանը և հաղորդությանը և հացը կտրելուն և աղոթքներին» (Գործք 2.42):

Շատ եկեղեցիներում այսօր միաբան աղոթքների ոլորտը տուժում է Սուրբ Գրքի հանրային ընթերցանությունն անտեսելու պատճառով: Կիրառվելու դեպքում էլ հաճախ քիչ է տարբերվում քաղաքային հավաքույթից, որտեղ ժամանակի մեծ մասն անցկացվում է՝ լուրեր փոխանակելով կամ, նույնիսկ, բամբասելով, ինչն ընդմիջվում է մի քանի րոպե տևողությամբ ընդհանուր աղոթքով: Հաճախ է պատահում է նաև, որ եկեղեցու միաբան աղոթքը հիմնականում կենտրոնացած է լինում հարանվանության ֆիզիկական կարիքների վրա, և լիովին անտեսվում են Արքայության առավել մեծ կարիքները, որոնք նշված են «Տերունական աղոթքի» մեջ:

Տեղի հարանվանությունում միաբան կամ հանրային աղոթքի ճիշտ տեղը վերականգնելու համար առաջնորդները պետք է ղեկն իրենց ձեռքը վերցնեն: Ոչ միայն պետք է ժամանակ հատկացնեն աղոթքին ու ցուցումներ տան աղոթքի կարևորության մասին, այլև սովորեցնեն եկեղեցուն ինչպես աղոթել աստվածաշնչյան հիմունքներով և ինչպես շտկել Աստվածաշնչին հակասող վերաբերմունքն ու կարգը, որով պատված են միաբան աղոթքի հավաքույթները: Պետք է

4 Ղուկ. 19.46, Եսայի 56.7

5 Ա Կորնթ. 3.16,17, 6.19, Բ Կորնթ. 6.16, Եփես. 2.21

նշել, որ աղոթքի ճիշտ դիրքի վերականգնումը հարանվանությունում գրեթե անհնար է, քանի դեռ առաջնորդները (հատկապես՝ արևմուտքում) շարունակում են առաջ տանել եկեղեցական հավաքույթները՝ որպես դարձի չեկածների մարմնական քմահաճույքների մատակարարմանը ծառայող և հասունություն չունեցողներին զբաղեցնող արարողակարգ: Թող որ Աստված բարձրացնի այնպիսի առաջնորդների, ովքեր առաջին դարի առաքյալների նման հանդիսավոր համոզվածությամբ կհռչակեն. «Իսկ մենք աղոթքին և Խոսքի պաշտամունքին հետևենք» (Գործք 6.4), և կառաջնորդեն եկեղեցուն նույնն անել:

## Հարցեր և խորհրդածություններ գլխի վերաբերյալ

1. Ո՞րն է ձեր կարծիքը պնդման վերաբերյալ. «Թե՛ ծառայողները, և թե՛ աշխարհականները հաճախ են ասում. «Երբևէ չեմ լսել, որ մահվան շեմին եղող հավատացյալը զղջա, որ չափից շատ ժամանակ է հատկացրել Աստծո Խոսքին և աղոթքին»»: Ինչպե՞ս կարող է այս պնդումը կիրառական լինել ձեր կյանքում:

2. Որո՞նք են երկու հիմնական գործոնները, որոնց պատճառով աղոթքը դժվար է թվում մեզ:

3. Ինչպե՞ս Հիսուսն Իր կյանքով ցույց տվեց, որ Ինքն աղոթքի Մարդ է: Ինչպե՞ս պետք է հետևենք Նրա օրինակին:

4. Որո՞նք են երկու ծայրահեղությունները, որոնցից պետք է խուսափենք, երբ սովորում ենք աղոթել աստվածաշնչյան հիմունքներով: Ինչպե՞ս էին եկեղեցու պատ-

մության ընթացքում աստվածաշնչյան բարեպաշտ սուրբերը սովորում աղոթել:

5. Ինչո՞ւ պետք է «Տերունական աղոթքը» հիմքային համարենք աստվածաշնչյան հիմունքներով աղոթքի մեր պատկերացման մեջ:
6. Համառոտ բացատրե՛ք «Տերունական աղոթքի» մեջ հիշատակված արտահայտություններից յուրաքանչյուրի կարևորությունը:
7. Բնութագրե՛ք անձնական կամ ծածուկ աղոթքը և դրա կարևորությունը:
8. Ի՞նչ տեղ է զբաղեցրել միաբան, հանրային աղոթքը վաղ եկեղեցու կյանքում: Ի՞նչ պետք է անենք այդ կարգն այսօրվա եկեղեցում վերականգնելու համար:

4

# Ապաշխարություն և խոստովանություն

Մեր հոգևոր հայրերը հազվադեպ են առանձնացրել ապաշխարությունը խոստովանությունից՝ որպես շնորհքի միջոց, քանի որ դրանք համարվել են աղոթքի հիմնական տարրեր: Այլ կերպ ասած՝ աղոթքի մասին որպես շնորհքի միջոց խոսելիս, ըստ էության, նկատի են առնվել նաև ապաշխարությունը և խոստովանությունը: Այնուամենայնիվ, քանի որ ժամանակակից եկեղեցում այդչափ անտեսված են ապաշխարությունն ու խոստովանությունը, հարկ եմ համարում դրանց մասին գրել առանձնացված՝ որպես շնորհքի միջոցներ:

Ժամանակակից մշակույթի և մեծապես ավետարանական ուղղվածության մեջ ապաշխարությունը և խոստովանությունը դիտարկում են բացասաբար կամ, առնվազն, որպես անհրաժեշտ չարիք: Ժամանակակից հոգեբանությունը սովորեցրել է ամեն գնով պաշտպանել մեր «ես»-ը, նույնիսկ եթե դրա համար ստիպված ենք հերքել իրականությունը կամ ստել թե՛ միմյանց, թե՛ ինքներս մեզ: Իրավիճակը վատթարացնում

է այն, որ ավետարանական քարոզչության մեծ մասը կարծես այնպես է նախագծված, որ քարտերը չեն բացվում, և Աստծո Խոսքի լույսով չեն բացահայտում մեր սխալները ու մեզ անհարմար դրության մեջ չեն դնում: Մենք մեծ վճռականությամբ պահպանում ենք «Ես լավ եմ... Դու լավ ես» ստատուս քվոն, նույնիսկ՝ երբ փաստերը հակառակն են խոսում: Արդյունքում մեր խղճմտանքը տանջվում է մեղքի զգացումից, մեր խաղաղությունը գերակայվում է Աստծուց օտարանալու խորը և համակող վերապրումով, իսկ գրեթե հավերժական պարտությունը կուլ է տալիս մեր հաղթանակը:

Ո՞րն է քրիստոնեությունը պաշարած այս հաճախ հանդիպող ախտի բուժումը: Ինչպես հաճախ պատահում է, մեզ անհրաժեշտ է հենց այն դեղորայքը, որից խուսափում են՝ ապաշխարություն և խոստովանություն: Աշխարհի, մարմնականի և չխրատվելու տեսանկյունից՝ ապաշխարությունը և խոստովանությունը ստորացուցիչ ու քայքայիչ են: Իսկ Աստվածաշնչի տեսանկյունից՝ դրանք նվեր են Աստծուց՝ որպես շնորհքի միջոց, որը տանում է վերականգնման, խաղաղության և ուրախության:

Եթե ցանկանում ենք քայլել Քրիստոսի հետ այն վստահությամբ և ուրախությամբ, որը Նա է կամենում մեզ համար, ապա պետք է շրջվենք աշխարհի գաղափարախոսություններից և ընդունենք այն բուժումը, որն ամփոփված է Սուրբ Գրքում: Աշխարհի և Խոսքի՝ միմյանց հակադրվող դեղամիջոցները հնարավոր չէ համատեղել. դա կվնասի հիվանդին: Մենք պետք է մերժենք աշխարհի բուժումները, որոնք մեզ ստիպում են պարզապես քողարկել մեղքի թարախակալող վերքը, և ընդունենք Խոսքի բուժումը, որը կարգադրում է մեզ հեռացնել քոսը և մաքրել վերքը:

## Ապաշխարություն

Նոր կտակարանում «ապաշխարել» բառն ամենից հաճախ թարգմանված է հունարեն *«metanoéo»* բայից՝ կազմված է *«noéo»* (ընկալել, հասկանալ) բայից և *«meta»* նախածանցից, որը նշանակում է փոփոխություն: Ուստի, ապաշխարությունը ներառում է արմատական փոփոխություն իրողությունների և իրականության ընկալման մեջ: Սուրբ Գրքում մտքի այդպիսի փոփոխությունը երբևէ չի սահմանափակվում ինտելեկտով, այլ՝ հավասարապես կտրուկ ազդում է հույզերի և կամքի վրա:

Կա եբրայերեն բառ՝ *«nacham»,* որն օգնում է առավել լավ հասկանալ, թե ինչ է ապաշխարությունը: Այդ բառի արմատը կրում է «խորը շնչել» իմաստը՝ փոխանցելով մարդու զգացմունքների, օրինակ՝ վիշտ, ափսոսանք կամ զղջում[1] ֆիզիկական արտահայտումը: Ուստի, աստվածաշնչյան ապաշխարությունը ոչ միայն ներառում է մտքի փոփոխությունը մեղքի վերաբերյալ, այլև՝ անկեղծ վիշտ մեղքի պատճառով:

Մեր մեղավորության և մեղքի մասին ճշմարիտ գիտակցումն առաջացնում է անկեղծ վշտի, ամոթի ու նույնիսկ առողջ ատելության կամ զզվանքի զգացում՝ մեր մեղքի կամ մարմնական բնույթի նկատմամբ: Գրագիր Եզրասն ասում է, որ Իսրայելի մեղքերի պատճառով «ամաչում է և չի համարձակվում բարձրացնել» իր երեսը դեպի Աստված: Երեմիա մարգարեն աղաղակում է. «Մենք պառկում ենք մեր ամոթով, և մեր անարգանքը ծածկում է մեզ. որովհետև մեր Տեր Աստծո դեմ մեղանչեցինք՝ մենք և մեր հայրերը՝ մեր մանկությունից մինչև այսօր: Եվ չլսեցինք մեր Տեր Աստծո ձայնին» (Երեմիա 3.25): Եզեկիել մարգարեն նույնիսկ այնքան համարձակ գտնվեց, որ հռչակեց, թե երբ անհնազանդ Իսրայելը վերջա-

1 *Հին կտակարանի աստվածաբանական աշխատանքային գրքեր*, R. Laird Harris, Gleason L. Archer, Jr., Bruce K. Waltke (Chicago: Moody, 1980), 2:570.

պես կգիտակցի Տիրոջ դեմ իր գործած մեղքի սարսափելի բնույթը, կզզվի ինքն իրենից՝ այն բոլոր չար բաների համար, որ գործել է (Եզեկ. 20.43): Ի վերջո, Հռոմի հավատացյալներին գրելով՝ Պողոս առաքյալը նշում է, որ նրանք դեռևս ամաչում էին այն բաների համար, որ արել էին մինչև դարձի գալը (տե՛ս Հռոմ. 6.21): Նմանատիպ խոսակցությունները կարծես տեղին չլինեն այնպիսի աշխարհում և ավետարանական համայնքում, որը ողողված է ինքնարժևորման մասին հոգեբանությամբ: Այնուամենայնիվ, վիշտը, ամոթը և ինքնատելությունը աստվածաշնչյան ճշմարտություններ են, որոնք երկու Կտակարաններում էլ անկեղծ ապաշխարության կարևոր մաս են կազմում:

Ապաշխարությունը հասկանալու համար պետք է դիտարկենք երկու տեսանկյունից՝ ապաշխարություն դեպի փրկություն՝ մեր դարձի գալու պահին, և շարունակական ապաշխարություն՝ դեպի սրբագործում, մեր ամբողջ քրիստոնեական կյանքի ընթացքում: Դարձի գալու պահից Սուրբ Հոգին վերածնում է մեր սրտերը, լուսավորում է մեր մտքերը և ի հայտ է բերում մեր սխալներն ու մեղքերը՝ բացահայտելով աստվածային ճշմարտությունը: Այս աստվածային աշխատանքի արդյունքում փոխվում են մեր մտքերը և արմատականորեն վերափոխվում է իրականության հանդեպ մեր ընկալումը՝ հատկապես Աստծո, ինքներս մեր, մեղքի և փրկության վերաբերյալ: Անհավատությունից և ինքնավարությունից մենք դառնում ենք դեպի հավատքը և հնազանդությունն Աստծո կամքին: Դարձի գալու պահից Սուրբ Հոգին մեր մեջ շարունակում է ապաշխարության աշխատանքը՝ բացահայտելով մեզ համար աստվածային ճշմարտությունը, որպեսզի այդ ահագնացող լույսի մեջ ավելի ու ավելի պարզ տեսնենք Աստծո բնավորությունը և ինքներս մեզ: Այս լույսի մեջ է, որ բացահայտվում են մեր մեղքերը, և մենք ապաշխարում ու խոստովանում ենք: Հին աստվածա-

բաններից և քարոզիչներից շատերը սրա մասին խոսելիս այն կոչել են «Գողգոթայի ճանապարհ»[2]՝ միակ ճանապարհը դեպի ազատություն և ուրախություն:

Հասկանալու համար, թե ինչպես են ապաշխարությունը և խոստովանությունը տանում դեպի կյանք, նախ և առաջ, մենք պետք է հասկանանք, որ մեղքի բոլոր տեսակները մահացու ախտ են քրիստոնյայի կյանքի համար: Այն աղտոտում[3], գերեվարում[4], թշվառություն է բերում և սպանում այն, ինչին դիպչում է[5]: Սակայն, ամենից առավել այն խոչընդոտում է հավատացյալի ընկերակցությունն Աստծո հետ և պիտանիությունն Աստծո համար: Չնայած որ բոլորովին ընդունելի ճշմարտություն է այն, որ Տեր Հիսուս Քրիստոսում գտնվող հավատացյալին ոչինչ չի կարող բաժանել Աստծուց (տես Հռոմ. 8.39), հավասարապես ճշմարիտ է նաև, որ մեղքը խոչընդոտում է մեր հաղորդությունն Աստծո հետ երկրից: Սաղմոսերգուն աղաղակում է. «Եթե ես անօրինություն տեսնեի իմ սրտում, Տերը չէր լսի ինձ» (Սաղմ. 66.18): Եսայի մարգարեն համարձակությամբ հայտարարում էր քմահաճ Իսրայելին. «Ահա Տիրոջ ձեռքը չի կարճացել փրկելուց, և Նրա ականջը չի ծանրացել լսելուց. այլ ձեր անօրինություններն են բաժանում ձեր և ձեր Աստծո մեջտեղը, և ձեր մեղքերը ծածկեցին

---

2 Ռոյ Հեյսոնի հեղինակած *«Գողգոթայի ճանապարհը»* գիրքը (Fort Washington, Pa.: Christian Literature Crusade, 1990) հրաշալի աշխատություն է աստվածաշնչյան ապաշխարության թեմայով, որը տանում է դեպի կյանք, ուրախություն և սրբագործում:

3 «Եվ մենք՝ ամենքս, պիղծ բանի պես ենք դառել, և դաշտանի շորի պես է մեր ամեն արդարությունը» (Եսայի 64.6): «Եվ երկիրը պղծեցիր քո պոռնկություններով ու չարություններով» (Երեմիա 3.2):

4 «Հիսուսը պատասխանեց նրանց. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե՝ նա, ով որ մեղք է գործում, մեղքի ծառա է»» (Հովհ. 8.34): «Դուք չգիտե՞ք, թե ում ձեր անձերը ծառա եք ներկայացնում՝ նրան հնազանդվելու, ծառաներ եք նրան, որին հնազանդվում եք. թե՛ մեղքին՝ դեպի մահ, և թե՛ հնազանդությանը՝ դեպի արդարություն» (Հռոմ. 6.16):

5 «Եվ այնուհետև, որ ցանկությունը հղացած է, ծնվում է մեղք, և մեղքն էլ, երբ որ կատարվում է, մահ կծնի» (Հակոբ. 1.15):

Նրա երեսը ձեզնից, որ չլսի» (Եսայի 59.1,2):

Հավատացյալի կյանքում մեղքի պղծող և մահաբեր բնույթը, ինչպես նաև Աստծո հետ մեր հաղորդության վրա դրա ազդեցությունը հպանցիկ տեսնելը պետք է դրդի մեզ արագ և պատշաճ բուժում գտնել: Այն պետք է մեր մեջ պատրաստակամություն առաջացնի կրկին օգտվելու այդ բուժումից ամբողջ կյանքի ընթացքում: Այդ բուժումն ապաշխարությունն է, և այն արդյունավետ գործում է, երբ մեր միտքը հագեցնում ենք Աստծո Խոսքով, անդամակցում ենք տեղի աստվածաշնչյան եկեղեցուն և տրամադրված ենք արմատականորեն լուծել մեղքի հարցը, երբ այն ի հայտ է գալիս:

Երբ մեր կյանքերը հագեցնում ենք Աստծո Խոսքով, նախ և առաջ, զգայուն ենք դառնում մեր մեղքի նկատմամբ և գիտակցում ենք, որ ապաշխարության կարիք ունենք:

«Դուք չգիտե՞ք, թե ում որ ձեր անձերը ծառա եք ներկայացնում՝ նրան հնազանդվելու, ծառաներ եք նրան, որին հնազանդվում եք. թե՛ մեղքին՝ դեպի մահ, և թե՛ հնազանդությանը՝ դեպի արդարություն»:

Ինչպես Դավիթն է ասել, ուղիղ կապ կա սիրտն Աստծո Խոսքով լցնելու և մեղքից փախչելու կարողության միջև (տե՛ս Սաղմ. 119.11): Այստեղ մենք պետք է գիտակցենք Աստծո Խոսքի բացարձակ անհրաժեշտությունը՝ հավատացյալին մեղքի նկատմամբ ավելի ու ավելի զգայուն դարձնելու գործում: Չնայած այն բանին, որ մեղքը հանդիմանելը Սուրբ Հոգու աշխատանքն է (տե՛ս Հովհ. 16.8)՝ այն թուրը կամ երկսայրի սուրը, որը Հոգին օգտագործում է սիրտը հատելու համար, Աստծո Խոսքն է: Կրկնենք այն, ինչ քննարկեցինք: Որքան ավելի ենք տեսնում Աստծո լույսը՝ Նրա Խոսքն ուսումնասիրելու արդյունքում, այնքան ավելի ենք կարողանում ինքներս մեզ տեսնել այդ լույսի ներքո: Երբ աճում ենք Խոսքի

մեջ, մեր՝ նախկինում թաքնված մեղքերն ի հայտ են գալիս, և մենք սովորում ենք տեսնել մեղքն այնպես, ինչպես Աստված է տեսնում, ինչպես նաև սուրբ մոլեգնությամբ ատում ու առանց փոխզիջումների մերժում ենք այն: Հոգու աշխատանքը, որով Նա բացահայտում է մեր կյանքում առկա թաքնված մեղքը, հաճախ կարող է ցավոտ, տանջալի և վշտալի լինել, սակայն դա է բուժման ուղին: Երբ մարդը տեղյակ չէ իր ներսում գոյություն ունեցող քաղցկեղից, նա կարող է երջանիկ լինել իր անտեղյակության մեջ, սակայն դա մահաբեր անտեղյակություն է: Իսկ այն հիվանդը, ով տեղյակ է քաղցկեղից, գուցե որոշ ժամանակ ցավ ապրի, սակայն սիրտ ցավեցնող այն լուրն ի վերջո կփրկի նրա կյանքը:

Երկրորդը՝ մենք զգայուն ենք դառնում մեղքի նկատմամբ և գիտակցում ենք, որ ապաշխարության կարիք ունենք, երբ մեր քրիստոնեական կյանքն ապրում ենք՝ ընկերակցելով տեղի եկեղեցու անկեղծ հավատացյալների հետ: Սա հաճախ անտեսվում կամ, նույնիսկ, արհամարհվում է ներկա սերնդի կողմից, այդուհանդերձ, բացարձակ անհրաժեշտություն է: Աստված է որոշել, որ ամեն հավատացյալ պետք է աճի աստվածապաշտ առաջնորդների, հավատարիմ ուսուցիչների և սուրբերի հետ ընկերակցության պայմաններում: Հին կտակարանը հաստատում է դա. «Երկաթը երկաթով է սրվում, և մարդը սրում է իր ընկերոջ երեսը» (Առակ. 27.17):

Նոր կտակարանն առավել պարզ է արտահայտվում: Պողոս առաքյալը գրում է, թե որոնք են Քրիստոսին ծառայողների առաջնային հանձնարարականները. «Խո՛սքը քարոզիր. վրա հասիր՝ թե՛ ժամանակին լինի, թե՛ ժամանակից դուրս. հանդիմանի՛ր, սաստի՛ր, հորդորի՛ր ամեն երկայնամտությունով և վարդապետությունով» (Բ Տիմոթ. 4.2): Նման ծառայությունը չի վերաբերում միայն Քրիստոսին ծառայողներին, այլև՝ ամբողջ հարանվանությանը: Նույնը Պողոսը գրում է

Կողոսիայի եկեղեցուն. «Քրիստոսի Խոսքը բնակվի ձեր մեջ առատապես ամեն իմաստությունով. իրար սովորեցրե՛ք և խրատե՛ք, սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով և շնորհքով օրհներգե՛ք Տիրոջը ձեր սրտերում» (Կողոս. 3.16): Աստվածին իր համաձայնությունն է տալիս նաև Եբրայեցիների թղթի հեղինակը. «Պինդ բռնենք հույսի դավանությունն անսայթաք, որ հավատարիմ է Խոստացողը: Եվ զգուշանանք իրար համար դեպի սեր և բարի գործեր գրգռելով: Եվ չթողնենք իրար հետ ժողովվելը, ինչպես ոմանց սովորությունն է. բայց իրար հորդորենք, և այնքան ավելի, որքան տեսնում եք, որ օրը մոտեցել է» (Եբր. 10.23-25): Եթե պահպանենք մեր վստահությունն առ այն, որ Սուրբ Գիրքը ներշնչված է Աստծո կողմից, անսխալական է և բավարար, ապա մեզ թույլ չենք տա կարծելու, թե կարող ենք քրիստոնեական կյանքն ապրել լիության մեջ և հասնել այն հասունությանը, որը հաճելի է Աստծուն՝ առանց հետևողական և գործնական մասնակցության տեղի աստվածաշնչյան եկեղեցու կյանքին: Այնտեղ մենք քաջալերվում ենք առաջ շարժվել այն ուղղությամբ, որ պետք է քայլենք, հանդիմանվում ենք՝ շեղվելու կամ սխալվելու պարագայում, խրատվում ենք, երբ մեր սրտերը քարացած են, իսկ պարանոցները՝ պնդացած: Եթե ձեր եկեղեցում այս ամենը տեղի չի ունենում, ապա այն պարզապես աստվածաշնչյան չէ:

Եվ երրորդը, երբ Խոսքի միջոցով Հոգին բացահայտում է մեղքը, դրա հարցերը պետք է լուծել խստությամբ, արմատապես և առանց արդարացումների ու հապաղումների: Հիսուսն ասաց Իր աշակերտներին. «Եվ եթե քո աջ աչքը գայթակղեցնում է քեզ, հանի՛ր այն և քեզնից դե՛ն գցիր, որովհետև լավ է քեզ համար, որ քո անդամներից մեկը կորչի, և քո ամբողջ մարմինը չգցվի գեհենը: Եվ եթե քո աջ ձեռքը գայթակղեցնում է քեզ, կտրի՛ր այն և քեզնից դե՛ն գցիր,

որովհետև լավ է քեզ համար, որ քո անդամներից մեկը կորչի, և քո ամբողջ մարմինը չգցվի գեհենը» (Մատթ. 5.29,30):

Սա, իհարկե, հիպերբոլ[6] է, սակայն ճշտորեն և հզոր ձևով փոխանցում է, թե ինչպես պետք է վարվենք մեղքի հետ, երբ այն ի հայտ է գալիս. մենք պետք է առանց հապաղելու, առանց փոխզիջումների կամ արդարացումների հրաժարվենք դրանից: Պետք է արագությամբ դատապարտենք այն, թույլ տանք, որ Աստծո Խոսքը անցնի դրա կենտրոնով, և մեղքից մեծագույն տհաճություն ապրելով՝ հեռացնենք մեզնից:

## Մեղքի խոստովանություն[7]

Չափազանց կարևոր է հասկանալ, որ անկեղծ ապաշխարությունը ենթադրում է ոչ միայն սրտի ցավ ապրել և մեղքից շրջվել, այլև բացեիբաց խոստովանել, որ Աստծո կարծիքը մեր մասին ճշմարիտ է, և Նրա դատավճիռն արդար է՝ *մենք մեղք ենք գործել:* Այլ կերպ ասած՝ աստվածաշնչյան ապաշխարությունը ենթադրում է, որ մենք պետք է մեզ վրա վերցնենք այն, ինչ արել ենք:

Այս ճշմարտությունը հակասում է ժամանակակից մշակույթին: Մենք ինքներս մեզ արդարացնող և մեր արածները հիմնավորող մարդիկ ենք, ովքեր երբեք չեն սխալվում, այլ միշտ զոհ են ինչ-որ չարամիտ, երբեմն էլ անանուն ուժի, որը մեր վերահսկողությունից դուրս է:

Մենք գտնում կամ հորինում ենք մեր մեղքերը մեզնից բացի ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի վերագրելու ամենահնա-

6 Չափազանցված փաստարկ, որը չպետք է բառացի հասկանալ. դրա նպատակն է՝ շեշտադրել այն ճշմարտության կարևորությունը, որը հաղորդվում է:

7 Այս հատվածի բովանդակության մի մասը՝ փոփոխված տեսքով, Փոլ Վոշերի *«Ավետարանի կանչը և իրական դավանափոխություն»* գրքից է (Grand Rapids: Reformation Heritage Books, 2013), 1-21.

րամիտ ձևերը: Մենք ինքնաարդարացմամբ մատնացույց ենք անում հասարակությանը, կրթությանը, դաստիարակությանը կամ հանգամանքներին և ապշում կամ, նույնիսկ, զայրանում ենք ամենափոքր ակնարկից, որ դա կարող է լինել մեր մեղավորությունը: Այդուհանդերձ, դարձի գալու պահին այս դարին հատուկ այդ կարծիքը արմատապես փոխվում է: Մեր կյանքերում առաջին անգամ մենք մեր մեղադրական մատը մեզ ենք ուղղում և ազնվությամբ մեզ վրա ենք վերցնում այն սխալը, որը գործել ենք: Մեր բերանները փակվում են, և մենք տեսնում ենք, որ Աստծո առջև հաշվետու ենք (տե՛ս Հռոմ. 3.19): Մենք արդարացումներ կամ փախուստի այլ ճանապարհներ չենք փնտրում՝ բացի Նրա ողորմությունից, որ հնարավոր դարձավ այն չարչարանքների շնորհիվ, որ Քրիստոսը կրեց մեր փոխարեն:

Մեղքի այս անձնական գիտակցումը՝ մեր արածների ամբողջ պատասխանատվությունը մեզ վրա վերցնելու վերաբերմունքը, ուղեկցվում է Աստծո առջև ազնիվ ու մերկ կանգնելով և մեր մեղքը սրտանց խոստովանելով: «Խոստովանել» բառը թարգմանված է հունարեն *«homologéo»* բառից. վերջինս բարդ բառ է՝ կազմված *«homos»* և *«logos»* արմատներից, որոնք համապատասխանաբար նշանակում են՝ «նույնը» և «բառ»: Այն փոխանցում է *նույն բանն ասելու* գաղափարը, այսինքն՝ խոստովանել՝ նշանակում է բանավոր համաձայնել Աստծո հետ, որ մեղք ենք գործել, և որ մեր մեղքը զզվելի է: Եթե նման խոստովանությունն անկեղծ է, ապա այն ուղեկցվում է վշտով, կոտրվածությամբ, զղջմամբ և ափսոսանքով: Երբ Սուրբ Հոգին Խոսքի կամ մեկ ուրիշի հանդիմանության միջոցով հայտնում է, որ մեղք ենք գործել, ապա մենք պետք է նույնը խոստովանենք Աստծուն: Օրինակ՝ եթե պարզվել է, որ մենք եղել ենք եսակենտրոն, անհամբեր և չսիրող, ապա խոստովանությունը հետևյալ կերպ կինչի. «Տե՛ր, այն, ինչ Դու

ասում ես իմ մասին, ճիշտ է: Ես եղել եմ եսակենտրոն, անհամբեր և չսիրող: Խնդրում եմ՝ ներիր ինձ Քո մեծ անվան համար և Քո Որդու քավության հիման վրա»:

Ուշադրություն դարձրեք աստվածաշնչյան խոստովանության երեք կարևոր տարրերին: Առաջինը՝ խոստովանողը չի ասում՝ «եթե մեղք եմ գործել», նույնպես և չի խոսում մեղքի մասին, այլ խոստովանում է այն մեղքերը, որոնք Սուրբ Հոգին Աստծո անսխալական Խոսքի[8] միջոցով բացահայտել է իր համար: Երկրորդը՝ անկեղծ խոստովանության մեջ չկան արդարացումներ, ոչ էլ՝ մեղքը մեկ ուրիշի վրա գցելու փորձեր. խոստովանողը գործած մեղքի կամ մեղքերի ամբողջ պատասխանատվությունն իր վրա է վերցնում: Երրորդը՝ ներման հույսը հիմնված չէ հավատացյալի՝ անցյալի բարի գործերից կուտակված արժանիքների վրա, այլ միայն Հիսուս Քրիստոսի զոհողության վրա, որ արել է մեր փոխարեն: Հասուն հավատացյալը հասկանում է, որ Աստծուց ներում ընդունելու իր միակ հիմքն այն է, որ «Քրիստոսը մեր մեղքերի համար մեռավ՝ գրքերի համեմատ: Եվ թե՛ թաղվեց, թե՛ երրորդ օրը հարություն առավ՝ գրքերի համեմատ» (Ա Կորնթ. 15.3,4):

Կա նաև խոստովանության չորրորդ հիմնական տարրը, որը պարզ չի երևում վերոնշյալ աղոթքի մեջ, սակայն այն պետք է նշել և շեշտադրել, քանի որ առանց դրա ապաշխարությունը կլինի անիմաստ և անօգուտ: Եվ դա հավատքն է: Մենք պետք է հավատանք Աստծո այն խոստումներին, որոնք ներում և մաքրագործում են առաջարկում կոտրվածներին և զղջացողներին՝ նույնիսկ ամենամեծ մեղքերից: Երբ այս ամենը ճշմարտապես հասկանում ենք, թվում է, թե Նրա շնորհքը չափից լավ է իրականություն լինելու համար կամ, նույնիսկ, սխալ է: Եվ դա այդպես կլիներ, եթե չլիներ մեր Տեր և Փրկիչ

8 Կարևոր է նշել, որ Սուրբ Հոգու հանդիմանական աշխատանքը միշտ համահունչ է գրված Խոսքի առողջ վարդապետությանը:

Հիսուս Քրիստոսի խաչը, որով Նա վճարեց մեղքի պարտքը՝ բավարարելով Աստծո արդարությունը և հանդարտեցնելով Նրա բարկությունը: Եթե ճիշտ չընկալենք խաչը, ապա Պետրոսի նման մեր մեղքի մեջ կգոչենք. «Ինձնից դո՛ւրս գնա, որ ես մեղավոր մարդ եմ, Տե՛ր» (Ղուկ. 5.8): Սակայն Գողգոթային ուղղված մեկ ճիշտ հայացքն ամենափխրուն սրտին կապացուցի, որ աղբյուր է բացված՝ մեղքն ու պղծությունը լվանալու համար (տե՛ս Զաքարիա 13.1), և կքաջալերի այդ փխրուն սրտին գոչել. «Աղաչում եմ՝ ների՛ր այս ժողովրդին Քո մեծ ողորմության համեմատ, ինչպես որ ներեցիր այս ժողովրդին Եգիպտոսից մինչև այստեղ» (Թվոց 14.19):

Մենք պետք է ամուր բռնենք Աստծո խոստումները, քանի որ հակված ենք մտածել, որ Նա ինչ-որ կերպ մեզ է նման (տե՛ս Սաղմ. 50.21), և որ Նրա ողորմությունը, շնորհքն ու ներումն ունեն միևնույն սահմանները և սահմանափակումները: Հարկավոր է միշտ հիշել. «Ինչպես որ բարձր է երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են Իմ ճանապարհները ձեր ճանապարհներից, և Իմ խորհուրդները ձեր խորհուրդներից» (Եսայի 55.9): Մենք մեզ մեծահոգի ենք համարում, քանի որ պարծենում ենք, որ յոթ անգամ ներել ենք, սակայն մոռանում ենք, որ Աստծո շնորհքը նույնիսկ չի սպառվում յոթ անգամ յոթանասունից: Աստծո ներումն ընդունելուն և դրանից օգուտ քաղելուն խոչընդոտում են նաև մեր դեմ ուղղված սատանայի մեղադրանքները, Աստծո բնավորությանն ուղղված նրա զրպարտանքները, խաչի զորության արժեզրկումը և շնորհքի անպայմանական բնույթի մերժումը նրա կողմից: Եթե սատանան չի կարողանում այնպես փոքրացնել մեր մեղքը մեր աչքերում, որ ապաշխարության կարիք չտեսնենք, ապա նա մեծացնում է այն, որպեսզի կարծենք, թե չնայած այն բանին, որ ներման կարիք ունենք՝ չենք կարող այն ստանալ, քանի որ հատել ենք աստվածային շնորհքի սահմաննե-

րը և հայտնվել անհույս իրականության մեջ: Եթե սա էլ նրան չի հաջողվում, ապա սատանան առնվազն կփորձի մեր մեջ կասկած առաջացնել Աստծո բարության հանդեպ և կհամոզի, որ հեռանանք Աստծուց ինչ որ ժամանակ, երբ Աստծո բարկությունը հանդարտված կլինի, և մենք կկարողանանք ապացուցել մեր կոտրվածության անկեղծությունը: Սատանայի ստերն ուժեղ են և ավելի ականավոր սուրբերի են տապալել, քան ես և դուք ենք: Նրա կրակոտ նետերի դեմ միակ վահանն ու պաշտպանությունը սա է՝ ամուր կառչել Աստծո խոստումներից: Այս պատերազմում մեզ համար մի լավ կանոն կա. չնայած այն բանին, որ Աստված կարող է սոսկալի անկեղծությամբ և ցավոտ հանդիմանությամբ մերկացնել մեր մեղքը՝ Նա միշտ հորդորում է մեզ վազել դեպի Իրեն և ոչ թե Իրենից հեռու: Ցանկացած ձայն, որը մեղավոր հավատացյալին Աստծուց հեռու է պահում, մարմնից է, աշխարհից և սատանայից. այն Աստծուց չէ: Սուրբ Գիրքը վկայում է, որ մեղքի համար աստվածային տրտմությունը բարձր է գնահատվում Աստծո կողմից:

> «Աստծո ընդունելի պատարագները կոտրված հոգին է. կոտրված ու փշրված սիրտը Դու չես անարգի, ո՛վ Աստված» (Սաղմ. 51.17):

> «Որովհետև այսպես է ասում Բարձրը և Բարձրյալը, հավիտենականության մեջ Բնակվողը, և Որի անունը Սուրբ է. «Ես բնակվում եմ բարձրում և սուրբ տեղը, բայց լինում եմ կոտրված և խոնարհ հոգի ունեցողի հետ, որ խոնարհների հոգին կենդանացնեմ, և կենդանացնեմ սրտով կոտրվածներին»» (Եսայի 57.15):

> «Այդ ամենն էլ Իմ ձեռքն է արել, և եղավ այդ ամենը,-

ասում է Տերը,- և Ես սրան եմ մտիկ տալիս՝ խոնարհին և կոտրված հոգի ունեցողին և Իմ Խոսքից դողացողին» (Եսայի 66.2):

«Երանի՜ սգավորներին, որ նրանք կմխիթարվեն» (Մատթ. 5.4):

«Երանի՜ նրանց, որ սոված և ծարավ են արդարության, որ նրանք կկշտանան» (Մատթ. 5.6):

Աստծո բարությունը և ներելու պատրաստակամությունն է, որ անկեղծ ապաշխարությունը և խոստովանությունը դարձնում է շնորհքի միջոց և մեծ ուրախության պատճառ: Որպես հավատացյալներ՝ մենք չպետք է անտեսենք Խոսքը կամ փակենք մեր ականջները Հոգուց, երբ մերկացվում է մեր մեղքը: Փոխարենը՝ մենք պետք է խոնարհեցնենք ինքներս մեզ, ընդունենք մեր մեղքը, շրջվենք և վազենք Աստծո Գահի սրահը, որի դռները հավիտյան լայն բացված են մեզ համար Հիսուս Քրիստոսի արյամբ: Եբրայեցիներին ուղղված թղթի հեղինակը բացատրում և հորդորում է հետևյալ խոսքերով. «Որովհետև ոչ թե այնպիսի Քահանայապետ ունենք, որ չկարողանա մեր տկարություններին կարեկից լինել, այլ մի այնպիսին, որ ամեն բանով փորձված մեր նմանությամբ, բայց առանց մեղքի: Ուրեմն, համարձակությունով մոտենանք Շնորհքի աթոռին, որ ողորմություն ընդունենք և շնորհք գտնենք՝ պատշաճ ժամանակին օգնելու» (Եբր. 4.15,16):

## Հավատքի նշանները

Մինչ առաջ անցնելը, կարևոր է նշել, որ մեղքի հանդեպ զգայունությունը, ապաշխարությունը և խոստովանությունը ոչ միայն հասուն քրիստոնեության նշաններ են, այլև հատ-

կանչական են անկեղծ դարձի գալուն: Նույնիսկ նորահավատներն են ցուցաբերում նոր և թշնամական տրամադրվածություն մեղքի նկատմամբ և ապաշխարում ու խոստովանում են իրենց մեղքերը: Իսկ եթե կա հակառակ պատկեր՝ ապաշխարության և խոստովանության բացակայություն, ապա դա փաստում է այն մասին, որ տվյալ անձնավորությունը դարձի չի եկել:

Սրա վերաբերյալ Հովհաննես առաքյալը գրել է. «Եթե ասենք թե մեղք չունենք, մեր անձերը խաբում ենք և ճշմարտություն չկա մեզանում [այսինքն՝ քրիստոնյա չենք]: Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի ամեն անիրավությունից [այսինքն՝ քրիստոնյա ենք]: Եթե ասենք թե մեղք չգործեցինք, ստախոս ենք անում Նրան, և Նրա Խոսքը մեզանում չէ» (Ա Հովհ. 1.8-10)[9]:

Իրապես դարձի գալու ամենամեծ ապացույցը՝ առանց մեղքի կատարելությունը չէ, ինչպես շատերը թյուրիմացաբար կարծում են, այլ՝ զգայունությունն է մեղքի նկատմամբ, մեղքից հրաժարվելը, մեղքի բաց խոստովանությունը և ներման ուրախությունը: Այդ իսկ պատճառով, անկեղծ հավատացյալները դրսինների համար կարծես պարադոքս լինեն: Մի կողմից կարող են բնութագրվել որպես «սգավորներ» (Մատթ. 5.4), մյուս կողմից՝ նշանավորվել «անպատմելի և փառավոր խնդությունով» (Ա Պետր. 1.8):

Երբ հավատացյալների գիտելիքն ավելանում է, վերջիններս սկսում են ավելի պարզ լույսի ներքո տեսնել իրենց մեղքն ու տարբերությունը Աստծո բնությունից: Սա տանում է ավելի խորը կոտրվածության կամ մեղքը սգալու: Ուստի, հավատացյալներին կարելի է կոչել «սգավորներ»: Միևնույն

---

9 Փակագծերում նշված պնդումները ավելացված են հեղինակի կողմից:

ժամանակ, երբ նրանք աճում են Աստծո ճանաչողության մեջ, ավելի լավ են տեսնում Նրա ողորմությունը և շնորհքը Քրիստոսի անձի և փրկագնման աշխատանքի շնորհիվ: Սա իր հերթին տանում է իրենց փրկության՝ Աստծո մեջ ավելի խորն ուրախության: Այդպես ամեն անցնող տարվա հետ նրանց սուգն ու ուրախությունը աճում են մինչև կյանքի ավարտը, երբ կլինեն միանգամայն կոտրված, սակայն լցված «անպատմելի և փառավոր խնդությունով»: Երբ մարդիկ հարցնում են, թե ինչպես կարող է սուգի և ուրախության նման համադրություն լինել միևնույն մարդու մեջ, հավատացյալները պատասխանում են. «Ես մեծ մեղավոր եմ, սակայն Քրիստոսն ավելի մեծ Փրկիչ է»: Բացի այդ՝ նկատի առե՛ք կարևոր անցումը: Ուրախությունն այլևս չի բխում իրենց արատավոր արժանիքներից կամ փոփոխական վարքագծից, այլ՝ Քրիստոսի խաչից և Աստծո շնորհքից, որը հոսում է խաչից:

## Կիրառելու ուրախությունը

Այս կարևոր ճշմարտություններն իմանալուց հետո պետք է դրանց լույսի ներքո քննենք մեր կյանքերն ու մեր քրիստոնեությունը: Արդյո՞ք աճում ենք Աստծո սրբության ճանաչողության մեջ և արդյո՞ք ինքներս ավելի ու ավելի զգայուն ենք դառնում մեր կյանքերում գոյություն ունեցող մեղքի նկատմամբ: Արդյո՞ք մեր մեղքերին արձագանքում ենք ավելի մեծ նողկանքով և քամահրանքով: Արդյո՞ք պայքարում ենք մեղքի դեմ: Արդյո՞ք մեր մեղքի ծանրությունը Աստծո բարության հետ մղում են դեպի ապաշխարություն և խոստովանություն (տե՛ս Հռոմ. 2.4): Եթե այս հարցերին տվել ենք հաստատուն պատասխաններ, ապա դա փաստում է այն, որ Աստված մեզանում փրկագործման աշխատանք է կատարել, սակայն մենք պետք է հաստատակամ գտնվենք և աճենք: Եկե՛ք միշտ

ունենանք «մեր ճանապարհները քննելու, փորձելու և Տիրոջը դառնալու» մտադելակերպ (Երեմ. Ողբ. 3.40): Եթե Աստված լիներ կոպիտ, չսիրող և դատապարտող՝ առանց ողորմության, ապա հասկանալի կլիներ այն, որ մենք ամեն բան կանեինք՝ թաքցնելու մեր մեղքը կամ ուղղակիորեն մերժելու այն: Սակայն մեր Աստված «բարեգութ և ողորմած է, երկայնամիտ և բազմագութ» (Սաղմ. 103.8): Նա ուղարկել է Իր միակ Որդուն վճարելու մեր ամեն անօրինության դիմաց՝ առաջինից մինչև վերջինը: Սուրբ Գիրքն ասում է, որ Նա «ամբարշտի մեռնելը չի ուզում, այլ՝ որ ամբարիշտը դարձի գա իր ճանապարհից և ապրի» (Եզեկ. 33.11): Ուստի, ետ դառնանք չար ճանապարհներից և ապրենք: Սուրբ Գիրքը վիճում է և ասում, որ Աստծո բարկությունը կատարում է «իր տարօրինակ պաշտոնը»[10], սակայն Նա ցանկանում է լինել գթառատ և սպասում է, որ ողորմի (տե՛ս Եսայի 30.18): Աստծո բնավորությանը վերաբերող այս ճշմարտությունների շնորհիվ մենք երբեք չպետք է ընկալենք ապաշխարությունը և խոստովանությունը որպես դահիճներ, որոնք տանում են դատապարտության և մահվան, այլ՝ որպես մեր Աստծո աղախիններ, որոնք առաջնորդում են դեպի Քրիստոսի արյունը, որը լվանում է մեզ և դարձնում ձյան պես ճերմակ և վերադարձնում Նրա ներկայության մեջ:

## Հարցեր և խորհրդածություններ գլխի վերաբերյալ

1. Տվե՛ք ապաշխարության աստվածաշնչյան սահմանումը: Սահմանման մեջ ներառե՛ք հունարեն *«metanoéō»* և եբրայերեն *«nacham»* բայերի սահմանումները:

10 «Որովհետև, ինչպես Փարասին սարի վրա՝ վեր կենալու է Տերը և բարկանալու է, ինչպես էր Գաբավոնի ձորում, որ գործի Իր գործը՝ Իր օտարոտի գործը, և կատարի Իր պաշտոնը՝ Իր տարօրինակ պաշտոնը» (Եսայի 28.21):

2. Քրիստոնյայի կյանքում մեղքը մեծ ախտ է: Բացատրե՛ք, թե ինչպես է չխոստովանված մեղքը փնաս հասցնում հավատացյալի կյանքին:
3. Ինչպե՞ս է անկեղծ ապաշխարությունը կախված Աստծո Խոսքի իմացությունից:
4. Ինչպե՞ս է անկեղծ ապաշխարությունը կախված տեղի եկեղեցու հավատացյալների հետ մեր ընկերակցությունից:
5. Ինչպե՞ս պետք է քրիստոնյան արձագանքի մեղքին կամ վարվի մեղքի հետ, երբ այն ի հայտ է գալիս:
6. Ո՞րն է «խոստովանություն» բառի աստվածաշնչյան սահմանումը: Սահմանման մեջ ներառե՛ք հունարեն *«homologéō»* բառի իմաստը:
7. Որո՞նք են աստվածաշնչյան խոստովանության չորս հիմնական տարրերը:
8. Ինչո՞ւ է այդքան կարևոր ներման վերաբերյալ Աստծո խոստումների իմացության մեջ աճելը և համառությամբ այդ խոստումներից կառչելը:
9. Ինչո՞ւ պետք է մեղքի ի հայտ գալը պատճառ դառնա, որ քրիստոնյան վազի Աստծո մոտ և ոչ թե վախով փախչի Նրանից:
10. Ինչո՞ւ է սատանան փորձում ստիպել, որ Աստծո ժողովուրդը կասկածով մոտենա Աստծո ներմանը: Ի՞նչ կարող ենք անել, որ դիմակայենք նրան:
11. Ինչպիսի՞ տրամադրվածություն ունի Աստված հավատացյալի նկատմամբ, ով կոտրված է իր իսկ մեղքի պատճառով և ներում է խնդրում: Որո՞նք են այս մասին ամենակարևոր սուրբգրային խոսքերը:

12. Բացատրե՛ք, թե ինչպես կարող է քրիստոնյան միաժամանակ բնութագրվել և՛ որպես սգավոր, և՛ որպես ուրախ մեկը:

13. Բացատրե՛ք, թե ինչպես է լինում, որ ապաշխարությունը և խոստովանությունը նվեր են Աստծուց՝ շնորհքի միջոց, որոնք տանում են դեպի վերականգնում, խաղաղություն և ուրախություն:

14. Բացատրե՛ք հետևյալ պնդումը. «Մենք երբեք չպետք է ընկալենք ապաշխարությունը և խոստովանությունը որպես դահիճներ, որոնք տանում են դեպի դատապարտություն և մահ, այլ՝ որպես մեր Աստծո աղախիններ, որոնք առաջնորդում են դեպի Քրիստոսի արյունը, որը լվանում է մեզ և դարձնում ձյան պես ճերմակ և վերադարձնում Նրա ներկայության մեջ»:

5

# Եկեղեցին

Համառոտ քննարկեցինք Սուրբ Գիրքը և աղոթքը՝ որպես շնորհիքի միջոցներ, իսկ այժմ անդրադառնանք եկեղեցուն, դրան անդամակցելուն և եկեղեցական կարգին: Նախ և առաջ, սահմանենք օգտագործվող եզրույթները, որպեսզի թյուրըմբռնումներ չլինեն: Այս գլխում «եկեղեցի» եզրույթը վերաբերում է տեղի տեսանելի մարմնին, որը բաղկացած է հավատացյալներից, ովքեր նվիրված են միմյանց, և նրանց հովվում են որակավորված առաջնորդները[1], որտեղ ծառայում են աստվածաշնչյան որակավորում ունեցող անձինք[2], ովքեր նվիրված են Աստվածաշնչի մեկնությանը և աղոթքին, ինչպես նաև պահպանում են արարողությունները և հետևում եկեղեցու կարգականոնին: Տեղի եկեղեցին հոմանիշ չէ Աստվածաշնչի ամենշաբաթյա սերտողություններին, *եկեղեցուն կից* ծառայությանը կամ համացանցով սիրելի քարոզիչներին լսելուն: Այս տարբերակումը կարևոր է, քանի որ շատերը կարծում են, թե ոչ ֆորմալ ընկերակցությունների միջո-

1 Ա Տիմոթ. 3.1-7, Տիտոս 1.5-9

2 Ա Տիմոթ. 3.8-13

ցով հնազանդվում են մեկտեղ ժողովվելու կարգադրությանը. դրանք կարող են օգտակար լինել, սակայն չեն փոխարինում տեղի, աստվածաշնչյան եկեղեցուն անդամակցելու՝ Աստծո անվիճարկելի ծրագրին:

Քրիստոնեական կյանքում ավելի մեծ հասունության և պիտանիության հասնելու ճանապարհը բարդ է: Եվ այս բարդությունը վերածվում է անհնարինության, երբ փորձում ենք հավատքի մեջ աճել և ամուր կանգնել տեղի, տեսանելի եկեղեցու և իրական հարաբերության համատեքստից դուրս, որում կան սովորեցնող և ուղղորդող առաջնորդներ, ովքեր ուսուցանում, հովվում և առաջնորդում են:

Այդ իսկ պատճառով, ոչ միայն օգտակար, այլև անհրաժեշտ է, որ մեր փրկությունը գործենք տեղի եկեղեցու շրջանակներում, և այն առաջնորդների հետ, ովքեր անվանապես ճանաչում են մեզ և հսկում մեր կյանքերը: Ահա թե ինչու է Եբրայեցիների թղթի հեղինակը զգուշացնում. «Պինդ բռնենք հույսի դավանությունը՝ անսայթաք. որ հավատարիմ է Խոստացողը: Եվ զգուշանանք իրար համար՝ դեպի սեր և բարի գործեր գրգռելով: Եվ չթողնենք իրար հետ ժողովվելը, ինչպես ոմանց սովորությունն է. բայց իրար հորդորենք, և այնքան ավելի, որքան տեսնում եք, որ օրը մոտեցել է» (Եբր. 10.23-25):

Այսօր վերոնշյալ նկարագրին համապատասխանող աստվածաշնչյան եկեղեցիների մահը սգալու պատճառ ունենք՝ եկեղեցիներ, որտեղ հովվում են որակավորված առաջնորդները, որտեղ ծառայում են աստվածաշնչյան որակավորում ունեցող անձինք, ովքեր նվիրված են Աստվածաշնչի մեկնությանը և աղոթքին, ինչպես նաև պահպանում են արարողությունները և հետևում եկեղեցու կարգականոնին: Այդուհանդերձ, պետք է զգույշ լինենք, որպեսզի չլինենք դատող և խիստ, ու եկեղեցուց կատարելություն չպահանջենք, երբ

մենք՝ անհատներս, անկատար ենք: Աստծո Խոսքի հայելու մեջ մեկ ակնթարթ ինքներս մեզ նայելը ի հայտ կբերի անկատարությունների մի երկար շարք, ինչպես նաև անհրաժեշտ գործողությունների ծավալուն ցուցակ: Այս և շատ այլ պատճառներով պետք է զգուշանանք, որ եկեղեցուց չպահանջենք այն, ինչին ինքներս չենք կարողացել հասնել մեր անձնական կյանքերում: Եկեղեցուց կատարելություն պահանջելու փոխարեն պետք է փնտրենք այնպիսի եկեղեցի, որի առաջնորդները և հարանվանությունը աճում են Աստծո չափանիշների իմացության մեջ և ձգտում են այդ նշաձողին:

## Առաջնորդի որակավորում ունեցող հովիվներ

Աստծո տված շնորհքի ամենակարևոր միջոցներից են Ավետարանի հավատարիմ և խոնարհ ծառաները, ովքեր համապատասխանում են առաջնորդի աստվածաշնչյան որակավորումներին[3] և նվիրված են աղոթքին ու Խոսքի ծառայությանը (տես Գործք 6.2,4): Այս ճշմարտությունը զարմանալիորեն պարզ շարադրված է Եփեսոսի եկեղեցուն ուղղված Պողոս առաքյալի նամակում. «Եվ նա մի քանիսին տվեց առաքյալներ լինելու, մի քանիսին՝ մարգարեներ, մի քանիսին՝ ավետարանիչներ, մի քանիսին՝ հովիվներ և վարդապետներ, Սուրբերի կատարելության համար, պաշտոնի գործի համար, Քրիստոսի մարմնի շինության համար. մինչև որ ամենքս հասնենք հավատքի և Աստծո Որդուն ճանաչելու միությանը: Եվ կատարյալ մարդ լինենք Քրիստոսի կատարյալ հասակի չափով» (Եփես. 4.11-13): Այս խոսքն ապացուցում է, որ առանց կասկածի նշույլի Քրիստոսն Ինքն է հավատարիմ ծառայողներ տալիս եկեղեցուն՝ շինության համար: Արդյո՞ք կանտեսենք կամ կարհամարհենք այս պարգևները: Արդյո՞ք կարժեզրկենք դրանց

3 Ա Տիմոթ. 3.1-7, Տիտոս 1.6-9

կարևորությունը: Կվարվե՞նք այնպես, կարծես չունենք այն դերորայքի կարիքը, որը Հիսուսն է նշանակել:

Անկեղծ, սակայն մոլորված հավատացյալը կարող է հետևյալ կերպով պատասխանել նշված հարցերին. «Սակայն չկան այնպիսի ծառայողներ, ովքեր ունեն առաջնորդի որակավորում և հավատարիմ են իրենց կոչմանն այնպես, ինչպես գրված է Սուրբ Գրքում»: Այս առարկության պատասխանը երկկողմանի է: Առաջինը՝ ասել, թե երկրի վրա չկան Քրիստոսին հավատարիմ ծառայողներ, ոչ այնքան քննադատություն է ծառայողների հասցեին, որքան կասկած՝ ուղղված Քրիստոսի գերիշխանությանը և զորությանը: Սա Քրիստոսի եկեղեցին է, և Նա է դրա մատակարարն ու օժանդակողը: Այո՛, շատ խաբեբաներ և բռնապետեր կան, սակայն Քրիստոսը միշտ էլ ունենալու է իր «յոթ հազար մարդուն, ովքեր Բահաղի առջև չծնկեցին» (տե՛ս Հռոմ. 11.4, Ա Թագ. 19.18):

Երկրորդը՝ մենք պետք է գիտակցենք, որ նույնիսկ ամենալավ մարդիկ երբեք չեն համապատասխանելու Քրիստոսի կատարելությանը, քանի որ ծառայում են փառքի այս կողմում: Հետևաբար, չնայած այն բանին, որ մենք ընդունում ենք այն, որ առաջնորդները պետք է համապատասխանեն իրենց ծառայության աստվածաշնչյան որակավորումներին և հավատարմությամբ կատարեն իրենց պարտքը, որևէ մարդուց չպետք է պահանջենք ավելին, քան գրված է Սուրբ Գրքում: Նույնիսկ մեծն Պողոս առաքյալն իր մասին հետևյալն է գրում. «Ոչ իբր արդեն բռնած լինեմ, կամ թե արդեն կատարյալ եղած լինեմ, բայց հետևում եմ, որ թերևս հասնեմ նրան, ինչպես որ էլ հենց Քրիստոս Հիսուսից բռնված եմ: Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա, ետևի բաները մոռանալով, դեպի առաջին լինողներն եմ նկրտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում» (Փիլիպ. 3.12-14):

Եկեղեցու անդամներին այս զգուշացումը տալուց հետո թո՛ւյլ տվեք այժմ հետևյալ ցուցումն ու զգուշացումը տալ ծառայողներին: Բոլոր ծառայողները կանչված են հավատարիմ լինելու այնպես, ինչպես Աստվածաշնչում է գրված, և բոլորն էլ ըստ դրա դատվելու են: Մենք չպետք է մեզ վրա առնենք ծառայության թիկնոցը կամ թույլ տանք, որ մեզ ծառայության վերցնեն, քանի դեռ մաքուր խղճմտանքով չենք համապատասխանում Սուրբ Գրքում[4] նշված որակավորումներին, և հասունություն ունեցող հարանվանությունը չի հաստատում, որ մեր բնավորությունն ու վարքագիծը համապատասխանում են այդ որակավորումներին: Այս որակավորումները կամընտրական չեն, և ո՛չ էլ նախատեսված են նրա համար, որ ծառայողն «ընթացքում համապատասխանի» դրանց. դրանք անվիճարկելի պահանջներ են: Ավելին՝ մենք պետք է ընդունենք, որ մեր ծառայությունները պետք է նախագծվեն և սահմանափակվեն նրանով, ինչը գրված է Սուրբ Գրքում:

Մենք իրավունք չունենք գրել մեր սեփական աշխատանքի նկարագիրը: Պետք է միանգամայն համոզված լինենք, որ ծառայությանը վերաբերող պահանջներն ու պարտականությունները պարզ գրված են Սուրբ Գրքում, իսկ մենք կանչված ենք երկյուղով և ամբողջ սրտով հնազանդվելու դրանց: Ծառայության թիկնոցը թե՛ արտոնություն է, և թե՛ լուրջ պատասխանատվություն: Եթե մենք Քրիստոսի ծառայողներն ենք, ապա հետևյալ զգուշացումները պետք է խորապես դաջվեն մեր սրտերում և մտքերում՝ ընդհուպ մինչև մեր ոսկրածուծի խորքը.

> «Եթե մեկն այս հիման վրա շինի ոսկի, արծաթ, ազնիվ քարեր, փայտ, խոտ, եղեգն. ամեն մեկի գործը պիտի հայտնվի, որ օրը կերևացնի. որովհետև կրակով պիտի

4 Ա Տիմոթ. 3.1-7, Տիտոս 1.6-9

հայտնվի: Եվ ամեն մեկի գործը՝ թե ինչպես է, կրակը կփորձի: Եթե մեկի գործը, որ շինեց, հաստատ մնա, վարձք կառնի: Եվ եթե մեկի գործն այրվի, վնաս կքաշի, բայց ինքը կապրի. այլ այնպես, ինչպես թե կրակով» (Ա Կորնթ. 3.12-15):

«Նրա համար էլ ջանք ենք անում, որ թե՛ մնանք, և թե՛ դուրս գնանք, հաճո լինենք նրան: Որովհետև մենք՝ ամենքս, պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով՝ ինչ որ գործեց՝ թե՛ բարի, և թե՛ չար» (Բ Կորնթ. 5.9,10):

«Շատ վարդապետներ մի՛ եղեք, եղբայրնե՛ր. գիտենալով, որ մեծ դատաստան պիտի ընդունեք» (Հակոբ. 3.1):

Որքան էլ հասուն լինի քրիստոնյան իր կարծիքով, կամ քանի տարի էլ, որ հավատքի մեջ լինի, պետք է լինի աստվածապաշտ և խոնարհ առաջնորդների ուսուցման և հովվության ներքո:

Սա ծառայության որևէ կամընտրական ռազմավարության վերաբերյալ իմ անձնական կարծիքը չէ, այլ՝ Քրիստոսի ծրագիրն է Իր եկեղեցու համար: Ես և դուք հոտը կերակրող պերճախոս խոսնակների, ուժեղ անհատականությունների, եկեղեցուց զատված հռչակավոր քարոզիչների, հոգևոր դիկտատորների կամ ագահ մարդկանց կարիք չունենք: Սակայն ունենք բարի հովիվների կարիք, ովքեր իրենց կյանքը դնում են գառների[5] համար, հավատարիմ ու խելամիտ տնտեսներ են և Աստծո ժողովրդին պատշաճ կերակուր են տալիս[6]:

5 «Ես եմ բարի Հովիվը. բարի հովիվն իր անձը դնում է ոչխարների համար» (Հովհ. 10.11):

6 «Տերն էլ ասաց. «Ուրեմն, ո՞վ է այն հավատարիմ և իմաստուն տնտեսը, որին իր տերը իր գերդաստանի վրա կարգեց, որ նրանց կերակուրը տա ժամանակին»» (Ղուկ. 12.42):

## Սուրբերի համայնք

Տեղի եկեղեցու համատեքստում շնորհքի մեկ այլ միջոց է սուրբերի ծառայությունը: Եփեսացիներին ուղղված Պողոսի նամակից հստակ երևում է, որ ծառայողները եկեղեցուն չեն տրվել ամբողջ ծառայությունն անելու համար, այլ՝ «Սուրբերի կատարելության համար, պաշտոնի գործի համար, Քրիստոսի մարմնի շինության համար» (Եփես. 4.12): Սուրբ Հոգին եկեղեցու յուրաքանչյուր անդամի հատուկ օժտել է, որպեսզի ամեն մեկը կարողանա մասնակցել տեղի եկեղեցու ծառայությանը: Սա նշանակում է՝ եկեղեցում ամեն անդամ ունի մարմնի մյուս անդամների կարիքը: Աստվածաշնչյան հասուն քրիստոնեության մեջ չկան «միայնակ գայլեր»: Իրականում, Եբրայեցիների 10.23-25 խոսքերը (վերևում մեջբերված) զգուշացնում են, որ ինքներս չթողնենք մեկտեղ ժողովվելը, որովհետև հարանվանության մյուս անդամների կողմից խրախուսվելու և քաջալերվելու կարիք ունենք:

Սա ամբողջ Նոր կտակարանում կրկնվող թեմա է: Ահա համառոտ օրինակ.

> «Պարգևները զանազան են, բայց Հոգին նույնն է: Եվ պաշտոնները զանազան են, բայց Տերը նույնն է: Եվ ներգործությունները զանազան են, բայց Աստված նույնն է, որ ամենը ամենքի մեջ ներգործում է: Բայց ամեն մեկին տրված է Հոգու հայտնությունը օգտի համար» (Ա Կորնթ. 12.4-7):

> «Ամեն մեկդ, ինչպես որ շնորհք է ընդունել, այն իրար մատակարարեք. ինչպես Աստծո կերպ-կերպ շնորհաց լավ տնտեսներ» (Ա Պետր. 4.10):

«Քրիստոսի Խոսքը բնակվի ձեր մեջ առատապես ամեն իմաստությունով. իրար սովորեցրեք և խրատեք, սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով և շնորհքով օրհներգեք Տիրոջը ձեր սրտերում» (Կողոս. 3.16):

Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, հնարավոր չէ գերագնահատել այն, թե որքան ունենք տեղի եկեղեցու կարիքը: Տեղի եկեղեցու շրջանակներում է, որ կանչված ենք ծառայություն մատուցելու և ստանալու՝ բոլորի շինության համար: Նույնիսկ մեծն Պողոս առաքյալն ուներ շնորհքի այս հրաշալի միջոցի կարիքը: Նա գրել է Հռոմի եկեղեցուն. «Որովհետև շատ ցանկանում եմ ձեզ տեսնել, որ մի հոգևոր շնորհք հաղորդեմ ձեզ ձեր հաստատվելու համար. այսինքն՝ որ ձեզ հետ մխիթարվեմ, մեր փոխադարձ՝ իմ և ձեր հավատքի միջոցով» (Հռոմ. 1.11,12):

## Արարողությունները

Նոր կտակարանի եկեղեցում երկու արարողություն կար՝ մկրտություն և Տիրոջ ընթրիքը: Պատմության ընթացքում շատ ավետարանականներ նախընտրել են օգտագործել «արարողություն» արտահայտությունը ավելի, քան «խորհուրդը»՝ խուսափելու համար այն հավանականությունից, որ բառի նման ընտրությունը կարող է հաղորդել այն սխալ կարծիքը, թե՝ փրկությունը շնորհվում է մկրտության կամ Տիրոջ ընթրիքի միջոցով:

Մկրտությամբ վերածնվելու ուսմունքը և այն կարծիքը, թե Քրիստոսը ֆիզիկապես ներկա է հացի և գինու մեջ, լուրջ սխալներ են: Տիրոջ ընթրիքն արվում է՝ որպես Քրիստոսի մահվան և հարության հիշատակի արարողություն. այն պետք է կատարվի եկեղեցու անունից՝ հիշելու Նրան. այն ծառայում է որպես Նրա փրկագնման աշխատանքի հռչակում, նշան և կնիք (տե՛ս Ա Կորնթ. 11.23-26): Մկրտությունը հավատացյա-

լի հրապարակային հռչակումն է առ այն, որ վերջինս հավատում է Քրիստոսին, ինչպես նաև հրապարակային նույնացումն է Նրա Անձի, Նրա Ավետարանի և Նրա ժողովրդի հետ: Չնայած այն բանին, որ մենք պետք է դատապարտենք նույնիսկ նվազագույն միտումը՝ կարծելու, թե մկրտությունը և Տիրոջ ընթրիքը փրկարար շնորհի միջոցներ են, հարկ է խոսել դրանց մեծ կարևորության և անհրաժեշտության մասին՝ որպես սրբագործող շնորհի միջոցներ՝ այնպես, ինչպես Սուրբ Գրքի ընթերցանությունն ու քարոզչությունն է, ինչպես նաև հարանվանական աղոթքը: Երկու արարողություններում էլ Քրիստոսը հռչակվում է և ներկա է Իր ժողովրդի մեջ: Եկեղեցու կարգուկանոնի մասին խոսելուց հետո Քրիստոսը հռչակում է. «Որովհետև, որտեղ երկու կամ երեք հոգի Իմ անունով ժողովված լինեն, ես այնտեղ՝ նրանց մեջ եմ» (Մատթ. 18.20): Եթե նման խոստմունքը վերաբերում է այն եկեղեցուն, որը հավաքվել է խրատելու չապաշխարած անդամին, ապա որքա՜ն ավելի վերաբերում է տեղի եկեղեցուն, որը հավաքվել է մկրտության կամ Տիրոջ ընթրիքի համար:

Մկրտության և Տիրոջ ընթրիքի արարողությունների կարևորությունը դժվար է գերագնահատել: Այդուհանդերձ, այն բանի արդյունքում, որ ավետարանական եկեղեցին արդարացիորեն փորձել է խուսափել այս արարողությունները որպես փրկության միջոց պատկերելուց, մենք հաճախ հարկ եղածից նվազ կարևորություն, արժեք և հանդիսավորություն ենք տալիս դրանց:

Առաջնորդները ոչ միայն պետք է սովորեցնեն այս երկու արարողությունների վերաբերյալ աստվածաշնչյան տեսանկյունը, այլև հարանվանությանը հաղորդեն դրանց հատուկ կարևորությունը և ուսուցանեն հավատացյալներին՝ ինչպես պատրաստեն իրենց սրտերն ու մտքերը դրանց համար:

**Եկեղեցական կարգուկանոն**

Շատերի մտքում եկեղեցական կարգուկանոնի մասին ակնարկը պատկերում է կրոնավորություն, ինքնաարդարացում, կեղծավորություն, սիրո պակաս և դաժանություն: Հաճախ դրան հակառակվում են համատեքստից կտրված այլ սուրբգրային համարներով. «Մի՛ դատեք, որ չդատվեք» (Մատթ. 7.1), կամ՝ «Բայց երբ որ ստիպում էին՝ հարցնելով Նրան, վեր նայեց և ասաց. «Ձեզնից ով անմեղ է, թող առաջ նա քար գցի դրա վրա» (Հովհ. 8.7): Նման բացասական կարծիքները և հակահարվածները հաճախ երեք աղբյուրից են բխում՝ անցյալի փորձառություններ, երբ եկեղեցական կարգուկանոնը ոչ աստվածաշնչյան ձևով է կիրառվել, Սուրբ Գրքի բացահայտ չիմացություն կամ ոչ աստվածաշնչյան, մարմնական և աշխարհային կարծիքներ այն մասին, թե ինչ է նշանակում իսկապես սիրել և հոգևոր մտահոգություն ցուցաբերել մեկ ուրիշի համար:

Մենք երբևէ չպետք է մոռանանք, որ Հիսուսը տեղի հարանվանություններին կարգադրել է եկեղեցում կարգուկանոն պահպանել (տե՛ս Մատթ. 18.15-17): Չնայած այն բանին, որ եկեղեցական կարգուկանոնի ոչ աստվածաշնչյան ձևերը պետք է խստորեն մերժվեն և արգելվեն՝ մենք չպետք է վատի հետ միաժամանակ լավից ևս ձերբազատվենք: Դա Աստծո կարգադրությունն է՝ որպես Իր եկեղեցին պաշտպանելու, մաքրելու և հասունության առաջնորդելու միջոց: Եկեղեցական կարգուկանոնը պահպանելուց հրաժարվել կամ այն տեսականորեն ընդունել, սակայն գործնականորեն մերժել՝ նշանակում է մերժել հենց Տիրոջը և Նրա գերիշխանությունը եկեղեցում: Ավելին՝ դա անպատմելի վնաս կհասցնի հարանվանությանը և կխոչընդոտի դրա առաջընթացը դեպի հասունություն:

Այժմ, երբ հաստատեցինք եկեղեցական կարգուկանոնի

վավերականությունը, հարկ է հարց ուղղել առ այն, թե ինչպես է եկեղեցական կարգուկանոնը նպաստում հարանվանության հոգևոր հասունությանը: Առաջինը՝ պետք է հասկանանք, որ եկեղեցական կարգուկանոնը սկսվում է շատ ավելի վաղ փուլերից, քան անդամին եկեղեցուց հեռացնելն է: Այն սկսվում է նոր անդամներ ընդունելուց, ջանալուց, որ վերջիններս իսկապես հասկանան Ավետարանը, և հուսալուց, որ նրանք իսկապես դարձի են եկել: Երկրորդը՝ եկեղեցական կարգուկանոնը դրսևորվում է Սուրբ Գրքի ջանասեր մեկնությամբ և նրանով, որ առաջնորդներն անձամբ հովվում են հարանվանության անդամներին: Երրորդը՝ եթե անդամներից որևէ մեկն իսկապես մեղքի մեջ է ընկնում, ապա կարգի հրավիրելու առաջին փուլն առանձին խրատելն է և շտկելը: Եթե չկան ապաշխարության նշաններ, ապա մեկ կամ երկու հասուն քրիստոնյաների (նախընտրելի է՝ առաջնորդների) խնդրում են, որ վերջիններս մասնակցեն զրույցին՝ խորհրդատվություն տրամադրելու և զանազանության հարցում օգնելու նպատակով: Ի վերջո, եթե դրանից հետո էլ ապաշխարություն տեղի չի ունենում, իրավիճակը բերվում է եկեղեցու առջև (տե՛ս Մատթ. 18.15-17): Եվ միայն, որպես վերջին միջոց, անդամը հեռացվում է եկեղեցուց: Սակայն նույնիսկ այդ ժամանակ, երբ սխալ գործած անդամն ապաշխարում է, ապա նրան սիրով և ներումով[7] հետ են ընդունում հարանվանություն:

Այս գլուխը պատշաճ կերպով ամփոփելու համար հարկավոր է կրկին ասել, որ իրական և ակտիվ անդամակցությունը տեղի եկեղեցուն բացարձակ անհրաժեշտություն է քրիստոնյայի հոգևոր հասունության համար: Աստված է տվել տեղի հարանվանությունը և առաջնորդ-հովիվներին, որպեսզի օգ-

7 Եկեղեցական կարգուկանոնին վերաբերող մի քանի կարևոր աստվածաշնչյան խոսքեր կարելի է գտնել Մատթ. 18.15-20-ում, Ա Կորնթ. 5.1-6.11-ում, Բ Կորնթ. 2.1-11-ում, Հռոմ. 16.17-ում, Գաղատ. 6.1-ում, Բ Թեսաղ. 3.6-ում, Տիտոս 3.10-ում, Հուդա 22,23-ում:

նի մեզ մեր հաճախակի երկար ու բարդ ընթացքի մեջ:

Ինչպես պարզ տեսնում ենք Սուրբ Գրքում, դա վտանգավոր ընթացք է, որը նախատեսված չէ միայնակ անցնելու համար: Մենք պետք է ենթարկվենք Աստծո կամքին և դառնանք տեղի եկեղեցու կարևոր անդամներ. եկեղեցու, որն անկեղծությամբ հետևում է Քրիստոսին ու Նրա հրամաններին՝ այնպես, ինչպես դրանք գրված են Սուրբ Գրքում:

## Հարցեր և խորհրդածություններ գլխի վերաբերյալ

1. Ինչպե՞ս է «եկեղեցին» սահմանվում այս գլխում: Ինչո՞ւ է կարևոր նման կերպ սահմանել եկեղեցին:

2. Բացատրե՛ք հետևյալ պնդումը. «Մենք պետք է զգուշանանք, որ եկեղեցուց չպահանջենք այն, ինչին ինքներս չենք կարողացել հասնել մեր կյանքում: Եկեղեցուց կատարելություն պահանջելու փոխարեն պետք է փնտրենք այնպիսի եկեղեցի, որի առաջնորդները և հարանվանությունը աճում են Աստծո չափանիշների իմացության մեջ և ձգտում են այդ նշաձողին»:

3. Բացատրե՛ք հետևյալ պնդումը. «Աստծո տված շնորհքի ամենակարևոր միջոցներից են Ավետարանի հավատարիմ և խոնարհ ծառաները, ովքեր համապատասխանում են առաջնորդի աստվածաշնչյան որակավորումներին և նվիրված են աղոթքին ու Խոսքի ծառայությանը»:

4. Ինչո՞ւ է կարևոր գիտակցել, որ առաջնորդի այն որակավորումները, որոնք գրված են Ա Տիմոթեոս 3.1-7 և Տիտոս 1.6-9 խոսքերում, կամընտրական չեն և նախա-

տեսված չեն նրա համար, որ ծառայողն «ընթացքում համապատասխանի» դրանց, այլ՝ անվիճարկելի պահանջներ են:

5. Բացատրե՛ք հետևյալ պնդումը. «Ես և դուք հոտը կերակրող պերճախոս խոսնակների, ուժեղ անհատականությունների, եկեղեցուց զատված հռչակավոր քարոզիչների, հոգևոր դիկտատորների կամ ագահ մարդկանց կարիք չունենք: Սակայն կարիք ունենք բարի հովիվների, ովքեր իրենց կյանքը դնում են գառների[8] համար, հավատարիմ ու խելամիտ տնտեսներ են և Աստծո ժողովրդին պատշաճ կերակուր են տալիս»:

5. Եփեսացիների 4.12 և Կողոսացիների 3.16 խոսքերի լույսի ներքո բացատրե՛ք, թե ինչպես է, որ սուրբերի հաղորդությունը տեղի եկեղեցում շնորհքի միջոց է:

6. Բացատրե՛ք հետևյալ պնդումը. «Աստվածաշնչյան հասուն քրիստոնեության մեջ չկան «միայնակ գայլեր»»:

7. Բացատրե՛ք մկրտության և Տիրոջ ընթրիքի իմաստն ու նպատակը: Ինչպե՞ս կարող են դրանք արդարացիորեն կոչվել շնորհքի միջոցներ:

8. Բացատրե՛ք հետևյալ պնդումը. «Չնայած այն բանին, որ մենք պետք է դատապարտենք նույնիսկ նվազագույն միտումը՝ կարծելու, թե մկրտությունը և Տիրոջ ընթրիքը փրկարար շնորհքի միջոցներ են՝ հարկավոր է խոսել դրանց մեծ կարևորության և անհրաժեշտության մասին՝ որպես սրբագործող շնորհքի միջոցներ»:

---

8 «Ես եմ բարի Հովիվը. բարի հովիվն իր անձը դնում է ոչխարների համար» (Հովհ. 10.11):

9. Ո՞վ է եկեղեցական կարգուկանոնի հեղինակը: Ի՞նչ կերպ է սա փաստում այն, որ եկեղեցական կարգուկանոնը շնորհքի աստվածաշնչյան միջոց է, որի օգնությամբ Աստծո ժողովուրդը կարող է լինել պաշտպանված, խրատված և շինված: Ի՞նչ կերպ է սա ապացուցում այն, որ աստվածաշնչյան կարգուկանոնը եկեղեցում սիրո անկեղծ դրսևորում է գայթակղություն բերող և չապաշխարող անդամի նկատմամբ:

6

# Ի պաշտպանություն պարզունակության

Ահա և հասանք այս համառոտ գրքի ավարտին, որում ներկայացվեցին սրբագործման մեջ աճելու անհրաժեշտ շնորհքի միջոցները՝ Սուրբ Գիրքը, աղոթքը, ապաշխարությունն ու խոստովանությունը և ծառայությունը տեղի եկեղեցում: Այդուհանդերձ, մինչ ամփոփելը, ցանկանում եմ անդրադառնալ հաճախակի հանդիպող առարկությանը, թե՝ իմ գրածը չափից ավելի պարզունակ է, և որ քրիստոնյաների տկարություններն ու ախտերը շատ ավելի բազմազան են, և նման պարզ միջոցներով դժվար կլինի բուժել կամ հաղթահարել դրանք: Նման առարկությանն ի պատասխան՝ ընդամենը երեք մեկնաբանություն:

Առաջինը՝ չնայած այն բանին, որ քրիստոնյաների կյանքում հաճախակի հանդիպող դժվարությունները[1] բարդ են,

1 Այստեղ կցանկանամ հստակեցնել այն, որ խոսքը՝ սրբագործմանը *հատուկ* դժվարությունների կամ խոչընդոտների մասին է, որոնք ընդհանուր են բոլոր հավատացյալների համար: Այստեղ չեմ խոսում ծայրահեղ մտավոր կամ հուզական խանգարումներ ունեցող անձանց արտասովոր դեպքերի մասին: Չնայած այն բանին, որ նրանք օգուտ կքաղեն շնորհքի «սովորական» միջոցներից՝ նման դեպքերում գուցե անհրաժեշտ լինի նաև մասնագետ բժիշկների, աստվածաշնչյան հիմունքներով աշխատող հոգեբանների օգնությունը և այլն:

դրանք ընդամենը բխում են մի քանի շատրվանից՝ մարմնից, աշխարհից և սատանայից: Եվ չնայած այն բանին, որ մենք նոր ստեղծված ենք Քրիստոսում և մեր ինքնությունն այլևս չի որոշվում Ադամի հետ մեր նախկին ազգակցությամբ (տե՛ս Բ Կորնթ. 5.17), ամեն հավատացյալի ներսում մնում է մեր ընկած բնույթի կամ մարմնականի ինչ-որ մաս, որը ցանկասեր է և պատերազմում է Հոգու դեմ:

Պողոսը գրում է Գաղատիայի եկեղեցուն. «Որովհետև մարմինը ցանկանում է Հոգուն հակառակ, և Հոգին՝ մարմնին հակառակ. սրանք իրար հակառակ են, որ միգուցե այն, ինչ դուք կամենում եք՝ այն անեք: Բայց եթե Հոգուց եք առաջնորդվում, օրենքի տակ չեք» (Գաղատ. 5.17,18):

Անկասկած, հավատացյալի ամենաթեժ պայքարը մարմնի հետ է, քանի որ աշխարհն ու սատանան կարող են քաշել, ճնշել և փորձել մեզ մեր մարմնի ցանկասիրության պատճառով: Ինչպես Հակոբոսն է գրում. «Բայց ամեն մեկը փորձվում է բուն իր ցանկությունից հրապուրված և խաբված» (Հակոբ. 1.14): Ուստի, մարմինը և մարմնի ցանկությունը հաղթահարելը նույնն է, ինչ ճակատամարտում հաղթանակ տանելը: Իսկ այս հոգևոր ճակատամարտում հաղթելու ամենաարդյունավետ միջոցը շնորհքի միջոցն է, որը ներկայացրինք. Սուրբ Գիրքը, աղոթքը և ծառայությունը տեղի եկեղեցում:

Երկրորդը՝ չնայած այն բանին, որ ես պարզ լուծում եմ առաջարկել և ընդամենը մի քանի զենք տվել այդ պատերազմը պատերազմելու համար՝ Աստվածաշունչը հաստատում է այն, ինչը ես առաջարկել եմ: Այլ դիսպանսերից դեղորայք կամ այլ զինարանից զենք վերցնելը ձեր ընտրությունն է: Այ-

նուամենայնիվ, մարդու մտքերն ու ռազմավարությունները ոչ մի օգուտ չեն տալիս (տե՛ս Հովհ. 6.63): Միայն այն զենքերը, որոնք մեզ տրված են Սուրբ Գրքում, «Աստծով զորավոր են՝ բերդեր քանդելու. խորհուրդներ ենք քանդում, և ամեն բարձրություն, որ գոռոզանում է Աստծո գիտության դեմ: Եվ գերի ենք բռնում ամեն միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար» (Բ Կորնթ. 10.4,5):

Երրորդը՝ կարծում եմ, որ նրանք, ովքեր կասկածում են շնորհքի միջոցների զորությանը, հաճախ անտեսում ու օգուտ չեն քաղում դրանցից: Թո՛ւյլ տվեք կրկնել և վերադառնալ այն հարցերին, որոնք ուղղեցի նախորդ գլխում:

Արդյո՞ք արդեն ամենը գիտենք, ինչ Սուրբ Գիրքն ասում է: Արդյո՞ք աղոթքով սպառել ենք Աստծո խոստումները: Արդյո՞ք այլևս աճելու տեղ չունենք Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ մտերմության մեջ: Արդյո՞ք քաղել ենք ամբողջ օգուտը, որ կարելի էր քաղել տեղի եկեղեցուն անդամակցելուց, թե՞ ավելի հավանական է, որ անուշադրության ենք մատնել կամ առնվազն անհոգ և նույնիսկ անփույթ ենք վարվել շնորհքի այս պարզ, սակայն կարևոր միջոցների նկատմամբ: Երբ ինչ-որ մեկը կասկածի տակ է առնում շնորհքի այն միջոցների արդյունավետությունը, որոնք ներկայացրի, ես նրանց հարցնում եմ, թե որքան ժամանակ են անցկացնում Խոսքի, աղոթքի և տեղի աստվածաշնչյան եկեղեցու առաջնորդների ու հարանվանության հետ ընկերակցության մեջ: Շատերը կախում են իրենց գլուխները, թափ տալիս ուսերը և ընդունում, որ անտեսել են դրանք: Դեռևս չեմ հանդիպել այնպիսի հանդուգն մեկին, ով ասի, որ սպառել է այդ միջոցները և արդյունք չի տեսել:

Թանկագի՛ն քույրեր և եղբայրներ, հավատքով և հաստատակամությամբ աղոթենք արթնության համար, սակայն մինչ այն կգա, նվիրենք մեզ շնորհքի պարզ միջոցներին, որոնցով մենք կարող ենք արտասովոր դառնալ՝ նմանվելով Քրիստոսին և օգտակար լինելով Նրան:

Ձեր եղբայր՝

Փոլ Դեյվիդ Վոշեր

Շատ հաճախ քրիստոնյաները սպասում են, որ տեղի կունենա հոգու արտասովոր շարժ, որը կբուժի իրենց հոգևոր ախտերը։ Եվ չնայած այն բանին, որ նման արթնությունը հնարավոր է, սակայն դա այն ձևը չէ, որով Աստված սովորաբար հասունացնում է Իր եկեղեցին։ «Շնորհքի հիմնական միջոցները» գրքում Փոլ Վոշերը քննարկում է այն երեք հայտնի նվերների մասին, որոնք Աստված տվել է աստվածապաշտության մեջ աճելու համար՝ Սուրբ Գիրքը, աղոթքը և մասնակցությունը տեղի եկեղեցու կյանքին ու ծառայությանը։ Արտասովորի հանդեպ մեր ցանկությունը երբեք չպետք է ստիպի մեզ անտեսել սովորականը։ Ավելի լավ է նվիրենք մեզ շնորհքի այս սովորական միջոցներին, իսկ Քրիստոսին արտասովոր կերպով նմանվելու և Նրան պիտանի լինելու հարցում կառչենք Սուրբ Հոգուց։

«Այս գրքի ամեն էջը արձագանք է գտնում սրտումս։ Իրական և տևական հոգևոր կենսունակություն ունենալու Աստծո կարգած ձևը ներկայացված է հակիրճ և պարզ, ուղիղ և ուժգին, լուրջ և ուշադրավ։ Իմ Աստվածաշունչը, փորձը և խղճմտանքը վկայում են այն մասին, որ Փոլ Վոշերը մատնանշում է մեր հոգևոր ախտերից որոշների պարզ բուժումները։ Իմ անձի օգտի համար ես ունեմ այս հիշեցումների կարիքը և ցանկանում եմ դրանք այն մարդկանց անձերի օգտի համար, ում սիրում եմ, ինչպես նաև Աստծո փառքի համար Իր եկեղեցում։ Կարծում եմ, որ դուք ևս ունեք դրանց կարիքը և պետք է ցանկանաք դրանք»։
**Ջերեմի Վոքեր**, հովիվ, Մեյդնբաուերի մկրտական եկեղեցի, Քրոլի, Անգլիա

ՓՈԼ ՎՈՇԵՐԸ տասը տարի ծառայել է Պերուի Հանրապետությունում՝ որպես միսիոներ։ Այդ ընթացքում հիմնադրել է «HeartCry» Միսիոներական համայնքը՝ միտված օժանդակելու պերուացիներին, ովքեր եկեղեցիներ են հիմնում։ Այժմ Փոլը «HeartCry» Միսիոներական համայնքի (heartcrymissionary.com) ծառայողներից է։ Նա և կինը՝ Չարոն, ունեն չորս զավակ՝ Յանը, Էվանը, Ռոուենը և Բրոնվինը։